

## ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ 1918–1920 ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Մաս առաջին: ՀՅԴ Արևելյան Բյուրոյի 1919 թ. հունիս-  
օգոստոսյան նիստերի արձանագրությունները\*

Հ (Տ) ԳԱՍԻՆԱԿՑՈՒԹՅԱՆ 1918-1920 թթ. ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ 4 (40) ԽՈՒՄԵՆԻՆԵՐ-ՊԵՆԿՄԵՆՔԵՐ, 2012  
ՎԻՄ ԽԱՄԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՄ

ՀՅԴ-ն արդեն ավելի քան 120-ամյա պատմություն ունի, իսկ Հայաստանի առաջին Հանրապետությունը գոյություն է ունեցել շուրջ 2.5 տարի: Այսուհանդերձ, նույնիսկ այդ կարճ ժամանակամիջոցում արձանագրված բախտորոշ իրադարձություններն իրենց անջնջելի կնիքն են դրել ինչպես Հայոց պետականության հազարամյակների պատմության, այնպես էլ ՀՅԴ-ի քաղաքականության ու գաղափարախոսության վրա:

1918–1920 թթ. ՀՅԴ-ն դարձավ պետականաստեղծ քաղաքական ուժ և կառավարող կուսակցություն, ուստի բնավ պատահական չպետք է համարել այն իրողությունը, որ 1918-ից մինչ այսօր Առաջին Հանրապետությունն ու ՀՅԴ-ն զուգադրվում են իրար՝ որպես ազգային պետականության որոշակի տեսլականի ու դրա վրա հիմնվող քաղաքական մոտեցումների հոմանիշեր: Ըստ այդմ՝ ՀՅԴ պատմությունը, բեկվելով քաղաքական տարբեր խմբավորումների և անհատ ուսումնասիրողների շահախնդրությունների ուսպնյակի մեջ, արժանանում է հակասական, երբեմն էլ՝ տրամագծորեն հակադիր գնահատականների: Քաղաքական պատճառներից զատ, դրանում իր դերն է խաղում ՀՅԴ 1918–1920 թթ. պատմության վավերագրերի զգալի մասի չիրապարակված, մասամբ նաև՝ անդառնալիորեն կորսված լինելու իրողությունը:

ՀՅԴ-ն Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադիր ուժն ու կառավարող կուսակցությունը դարձավ այն բանից հետո, երբ Հայոց ցեղասպանության արդյունքում կուսակցության Արևմտյան Հայաստանի կառույցները դադարեցրին իրենց գործունեությունը: Արևմտահայության ինքնապաշտպանական կռիվներում առանցքային դեր խաղացած դաշնակցական կառույցների փրկված բեկորները Այսրկովկասում կազմակերպորեն համախմբվեցին գաղթականական Կենտրոնական կոմիտեների շուրջ: Դրանց նախնական վերակազմավորման գործում մեծ դեր խաղաց Երևանում կայացած ՀՅԴ արևմտահայ հատվածի ուսյունական ժողովը

\*Ընդունվել է տպագրության 28.10.2012:

(1917 թ. մայիս): Նրա գումարման վայրի ընտրությունն արդեն իսկ վկայում էր, որ Երևանն է դարձել կուսակցության գործունեության առանցքը, իսկ քիչ անց նաև՝ 1918 թ. Մայիսյան գոյամարտերի արդյունքում ծնունդ առած Հայաստանի առաջին Հանրապետությունը կերտող քաղաքական ուժի հիմնական կենտրոնավայրը:

Այսրկովկասի երեք հանրապետությունների անկախության հռչակումից հետո ՀՅԴ-ն մասնակիորեն զրկվեց նաև իր տարածաշրջանային կարևոր կազմակերպական կենտրոններից՝ Թիֆլիսից (մենշևիկների հայահալած քաղաքականության արդյունքում՝ թուլացած) և Բաքվից (Մուսավաթի ձեռնարկած հալածանքների և ջարդերի հետևանքով՝ կազմալուծված): Իսկ բուն Ռուսաստանի տարածքում առկա կուսակցական կառույցների գործունեությունը բոլշևիկյան ահաբեկչության հաստատմամբ գրեթե դադարեցվեց:

Հայաստանի առաջին Հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում ՀՅԴ քաղաքական, կազմակերպական ու գաղափարախոսական սկզբունքների հետագա հստակեցման գործում կարևոր նշանակություն ունեցավ կուսակցության 9-րդ Ընդհանուր ժողովը<sup>1</sup>: Ժողովը, հիմք ընդունելով Միացյալ Հայաստանի հռչակման ակտը, որոշեց չեղյալ համարել Ռուսահայաստանի և Տաճկահայաստանի վերաբերյալ ՀՅԴ նվազագույն ծրագրի քաղաքական պահանջները<sup>2</sup>: Ընդհանուր ժողովում ընտրվեց կուսակցության մեկ ղեկավար գործադիր մարմին՝ Բյուրո, հետևյալ կազմով. **Համազասպ Օհանջանյան, Ռուբեն (Մ. Տեր-Մինասյան), Սիմոն Վրացյան, Արշակ Զամայան, Արմեն Գարո, Սարգիս Արարատյան, Աբրահամ Գյուլխանդանյան** (անդամներ), **Գևորգ Ղազարյան, Վահան Նավասարդյան, Արսեն Շահմազյան** (փոխանդամներ)<sup>3</sup>:

Ըննց այս մարմինն էր կոչված ղեկավարելու կառավարող կուսակցության հետագա գործունեությունը, քանզի մինչև 1918 թ. ՀՅԴ գործիչները պետական գործունեության փորձ չունեին (Ալ. Խատիսյանը եզակի բացառություններից էր): Այդ իսկ պատճառով, կուսակցության ներքում ընթանում էր ոչ ընդգծված պայքար՝ կուսակցական և կառավարական կամ հեղափոխական և պետական հայեցակետերի ու գործելակերպի հիմնավորման ու կիրառման հարցերում: Այս արտաքուստ միայն քողարկված գործընթացը երբեմն այնքան արտահայտիչ էր դառնում, որ նկատելի էր լինում նույնիսկ ՀՅԴ Բյուրոյի անդամների մակարդակով: Որպես ասվածի ցայտուն վկայություն՝ կարելի է բերել 1919 թ. դեկտեմբերի վերջին ՀՅԴ Գերագույն Դատական ատյանի կողմից Բյուրոյի անդամ Ա. Զամայանի հարցի քննարկումը, ինչը կապված էր վերջինիս «Իրավական թե հեղափոխական պետություն» հրապարակային դասախոսության ժամանակ արտահայտած մտքերի հետ<sup>4</sup>: Այս իրողությունը, բնականաբար, առաջ բերեց բուռն քննարկումներ կուսակցական մամուլի էջերում և առանձին

1 Մանրամասն տե՛ս՝ **Հակոբյան Ա.**, Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովը, Եր., 1994:

2 Տե՛ս Քաղաածքներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներէն, Եր., 1920:

3 Տե՛ս **Տասնապետեան Հրաչ**, Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառույցի հովվոյթը, Պէյրութ, 1985, էջ 116-117:

4 Այս Դատական գործը, որը պահվում է ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 23-ում, ՀՅԴ 1918-1920 թթ. պատմության այլ վավերագրերի հետ միասին, հրապարակվելու է «Վէմ»-ի առաջիկա համարներում:

կումիտեններում<sup>5</sup>:

Տասնամյակներ շարունակ օտար պետական կառույցների դեմ հեղափոխական պայքար մղած ՀՅԴ-ի պարագայում մոտեցումների նման տարբերություններն ինչ-որ առումով օրինաչափ էին ու անխուսափելի, և պետական կառավարման սեփական՝ ազգային համակարգը ստեղծելու գործընթացը ստանձնած կուսակցության ներսում պետք է առաջ բերեին որոշակի տարակարծություններ:

Եթե ՀՅԴ գործիչների մի մասը կողմ էր ՀՀ պետական կառավարման մարմինների նշանակության և հեղինակության հարաճուն բարձրացմանը, ապա մյուս մասը կուսակցական գործոնի շեշտադրման, ՀՅԴ Բյուրոյի վերադաս դերակատարության ամրապնդման կողմնակից էր:

Եթե **առաջին** մասի համոզմամբ՝ Բյուրոն և մյուս ղեկավար կուսակցական մարմինները պետք է անվերապահորեն պաշտպանեին կառավարության գործունեությունը և ըստ ամենայնի սատար կանգնեին նրան, ապա **երկրորդի** կարծիքով՝ վտանգավոր մարտահրավերների առջև կանգնած նորաստեղծ պետականությունը հնարավոր էր պահպանել ու ամրապնդել միայն կուսակցական-հեղափոխական գործելակերպով:

Այսուհանդերձ, առարկայական և ենթակայական պատճառներով, նման իրավիճակը չխաթարեց ընդհանուր առմամբ՝ համերաշխ ներկուսակցական մթնոլորտը: Իսկ արդեն 1920 թ. մայիսին խնդիրը արմատական լուծում գտավ. հաստատվեց Բյուրո-կառավարության իշխանությունը: Փաստորեն՝ Բյուրո-կառավարության հաստատմանը զուգահեռ հրապարակ եկավ կուսակցական մարմինների գերիշխանությունը: Արդյունքում պետական և կուսակցական մարմինների միջև առկա որոշակի մրցակցությունը թուլանում և զրկվում էր ուժականությունից, կամ ավելի ճիշտ՝ հաստատվում էր կուսակցության գերագույն և տեղական կառույցների միանգամայն իրական իշխանությունը: Դրան զուգահեռ նկատելի էր նաև կուսակցական և պետական մարմինների սերտաձուլումը, ինչ-որ առումով նաև՝ նույնականացումը, ուստի սխալ կլինի միանշանակ կերպով փաստել՝ կուսակցական, թե՛ պետական կողմն էր մենաշնորհը շահողը: Մակայն այս պարագայում էլ, շատ դեպքերում տարվելով պետական կառավարմամբ, բուն կուսակցական գործունեությունն էր ինչ-որ չափով ետին պլան մղվում, ուստի հետագայում Կ. Մասունին ոչ առանց հիմքի փաստում էր, որ «Կուսակցությունը մոռցուեցավ: Բիւրոն ամբողջովին կլանուեցաւ պետական աշխատանքով»<sup>6</sup>:

Առաջին Հանրապետության գոյության շրջանում ինչպես ՀՅԴ ազգային-պետական տեսլականի, այնպես էլ գաղափարական սկզբունքների հստակեցման համար կարևոր նշանակություն ունեցավ 1919 թ. մայիսի 28-ին ընդունված Միացյալ Հայաստանի ակտը<sup>7</sup>: Միացյալ Հայաստանի

5 Տե՛ս «Յառաջ», Եր., 1919, 24 դեկտեմբերի:  
 6 **Մասունի Կ.**, Մայիսեան խոռովությունները և թաթար ապստամբ շրջանները, Պէյրուք, 1968, էջ 205:  
 7 Ժամանակի հեռավորությունից այժմ արդեն ակնհայտ է այն փաստը, որ «Միացյալ Հայաստան» եզրը թե՛ կուսակցական-քաղաքական և թե՛ անգամ հասարակական գիտակցության մեջ միանշանակորեն զուգորդվում է ՀՅԴ-ի հետ, թեկուզ այն պարզ պատճառով, որ «Միացյալ» բառն օգտագործողը հասարակության կողմից ընկալվել ու

գաղափարը Փարիզում 1918 թ. նոյեմբերի 30-ին առաջինը հռչակել էր Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը<sup>8</sup>: Հաջորդ քայլը կատարել էր 1919 թ. փետրվարի 6–13-ին Երևանում գումարված Արևմտահայերի Բ համագումարը: Լինելով հասարակական կառույց և նույնպես իրավասություն չունենալով, այս համագումարը հայտարարել էր Միացյալ Հայաստանի անկախությունը՝ միաժամանակ հանիրավի վստահություն հայտնելով Պողոս Նուբարի գոյություն չունեցող կառավարությանը<sup>9</sup>:

Սակայն Միացյալ Հայաստանի ակտի ընդունումը Հայաստանի Հանրապետության ներսում առաջ բերեց բուռն վեճեր և ավելի սրեց միջկուսակցական պայքարը: Մասնավորապես, հիմնվելով այդ իրողության վրա, արևմտահայ գաղթականներն իրենց խորթ էին զգում և անհրաժեշտության դեպքում խուսափում քաղաքացիական պարտականությունների կատարումից<sup>10</sup>:

Հայաստանի Խորհրդում ՀԺԿ խմբակցությունը իր 1919 թ. հունիսի 4-ի նիստում մայիսի 28-ի ակտը համարեց պետական հեղաշրջում և բուռն կերպով բողոքեց կառավարության «հանցավոր» քայլի դեմ<sup>11</sup>: 1919 թ. դեկտեմբերի 21–27-ին Երևանում կայացած Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի շրջանային Բ. համագումարը կտրականապես մերժեց ձանաչել ՀՀ կառավարությունը՝ որպես Միացյալ Հայաստանի կառավարություն<sup>12</sup>: Այսպիսով, Պողոս Նուբար–ՀԺԿ–Ռամկավարներ խումբը հակառակ դիրքորոշում ուներ, որը, սակայն, ոչ թե սկզբունքի, այլ առաջին հերթին՝ ՀՅԴ–ի հետ հակամարտության արդյունք էր:

Այս ամենին տրամագծորեն հակառակ դիրքորոշում ուներ կառավարող կուսակցությունը, որի Արևելյան Բյուրոն հանդիսավորապես հայտարարեց, որ չկան այլևս «բռնաւորների ձեռքով գծուած սահմաններ, հայկական տարրեր հատուածներ և հայրենիքներ», այլ կան և կմնան առհավետ «մէկ Անբաժան և Միացեալ Հայաստան ու մեկ ամբողջացած հայ ժողովուրդ»<sup>13</sup>: Նման բնույթի շրջաբերական ուղարկեց տեղական մարմիններին նաև ՀՅԴ Երկրի Կենտրոնական կոմիտեն՝ ավելացնելով, որ «Հ. Յ. Դ. ինչպէս միշտ՝ այս անգամ էլ եղաւ միակ կուսակցութիւնը, որը քայլում է դէպի հայ պետականութեան գաղափարն ու նրա հրամայական իրականացումը»<sup>14</sup>:

Ակտի հետ սերտորեն առնչվում էին Ազգային պատվիրակության և ՀՀ կառավարության միջև Երևանում 1919 թ. հոկտեմբերի 22 – նոյեմբերի 16-ին տեղի ունեցած բանակցությունները՝ միացյալ պատվիրակություն, խորհրդարան և կառավարություն ստեղծելու հարցի շուրջ<sup>15</sup>: Պողոս

ընկալվում է որպես դաշնակցական:

8 Տե՛ս Միացեալ և Անկախ Հայաստան. Պատմական քայլ, Կ. Պոլիս, 1919, էջ 59:

9 Տե՛ս Համառոտ տեղեկագիր՝ Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, Թիֆլիս, 1919:

10 Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Եր., 1990, հտ. Է, էջ 149; **Վրացեան Ս.**, Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրոս, 1962, էջ 300:

11 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 292, ց. 1, գ. 2, թ. 2:

12 Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 393–397:

13 Միացեալ և Անկախ Հայաստան, էջ 88–89:

14 Միացեալ և Անկախ Հայաստան, էջ 89–90:

15 Մանրամասն տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 240; գ. 278, թթ. 22, 79ա–80: Տե՛ս նաև՝ **Վրացեան Ս.**, Բանակցութիւններ Ազգային Պատուիրակութեան և Հայաստանի Պատուիրակութեան միջև, Պոսթըն, 1920: Տե՛ս նաև՝ «Մամուլի մեջ տպուած և անտիպ երկեր ու նամակներ Վահան

Նուբարի պատվիրակների անգիջում կեցվածքի պատճառով դրանք այդպես էլ անարդյունք ավարտվեցին:

Հետագայում ևս ՀՅԴ տեսաբաններն ըստ արժանվույն են գնահատել Միացյալ Հայաստանի գաղափարը: Այսպես, Գ. Գյոզալյանը Միացյալ Հայաստանի ակտը համարում էր «ստեղծագործություն նաև վերջին դարաշրջանի մտաւորականութեան, որը միտք հանգեցրեց, արին թափեց, հերոսական պայքար մղեց ամէնուրեք», ինչի արդյունքում «առանց նրա անհասկանալի կլիներ Հ. Յ. Դ. գործը, առանց Հ. Յ. Դ.՝ աննկատելի կդառնար Մայիս 28-ի անկախութիւնը»<sup>16</sup>: Իսկ Ա. Աբեղյանը իրավացիորեն նշում էր, որ Միացյալ Հայաստանի գաղափարը միմիայն ժամանակակից Հայաստանի սահմանների ընդարձակման խնդիր է այն ուղղությամբ և այն չափով, որ օգտակար ու անհրաժեշտ է հայության ցրված հատվածները հայրենի հողի վրա համախմբելու համար<sup>17</sup>: Հանրագումարի բերելով՝ Հր. Տասնապետյանը գտնում էր, որ ազգային նպատակների տեսակետից ՀՀ ժամանակաշրջանի հիմնական ավանդը եղավ Միացյալ Հայաստանի գաղափարի մշակումը<sup>18</sup>: Հետագայում ևս ՀՅԴ-ն իր քաղաքական նպատակներից առանցքայինը համարել ու համարում է Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի կերտումը<sup>19</sup>:

Այսպիսով, Հայաստանի առաջին Հանրապետության օրոք կառավարող ՀՅԴ-ն պետական շինարարության և ազգային հիմնախնդիրների հետապնդման ասպարեզում սոցիալիստականից առ առավելն ազգային էր: Իսկ արտաքին քաղաքականության ոլորտում կուսակցական-հեղափոխական և պետական-կառավարական մոտեցումների շուրջ որոշակի տարաձայնություններն այդպես էլ սուր մրցակցության չվերածվեցին, արդյունքում պահպանվեց այն քաղաքական միջուկը, որի շուրջ համախմբվել էր պետականաստեղծ կուսակցությունը:

Այս բախտորոշ ժամանակաշրջանին վերաբերող ՀՅԴ պատմության սկզբնաղբյուրները Հայաստանի խորհրդայնացման և դրան հետևած Փետրվարյան ապստամբության արդյունքում մասամբ են միայն հանգրվանել արտասահմանում: Հրապարակվող վավերաթղթերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվի ՀՅԴ ֆոնդում:

«Վէմ»-ի էջերում նախաձեռնելով Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում ՀՅԴ ներկուսակցական և պետականաստեղծ գործունեությանը վերաբերող փաստաթղթերի հրապարակումը, հույս ենք հայտնում, որ դրանով կնպաստենք նշյալ ժամանակահատվածի պատմության հետագա ուսումնասիրության գործին<sup>20</sup>:

Հաջորդական մասերով նախատեսում ենք հրապարակել ՀՅԴ 9-րդ

Թեքեանէն», Պէյրոյթ, 1987, էջ 325-331:

16 Գիւզալեան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ.Յ.Դ., Փարիզ, 1927, էջ 138-139:

17 Տէն Աբեղեան Ա., Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստան, «Հայրենիք», Պոսթըն, 1927, օգոստոս, էջ 131:

18 Տէն «Դրօշակ» Բացառիկ, Աթէնք, 1988, թ. 3-4, էջ 23:

19 Տէն Հ. Յ. Դ. Ծրագիր, հաստատուած ԻԲ. Ընդհանուր ժողովում, 1982, էջ 25:

20 Այս շրջանի ՀՅԴ պատմության վերաբերյալ եզակի աշխատություններից հիշատակենք՝ Քիրքձեան Յարութիւն, Ուրուագիծ ՀՅԴ պատմութեան 1919-1924 հնգամեակի, «Յեղափոխական գրադարան» մատ-շար, N 3, Աթէնք, «ՀՅԴ Բիւրո», 1988, 94 էջ: Տասնապետեան Հրաջ, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև ժ. Ընդհանուր ժողովը (1890-1924), «ՀՅԴ», Աթէնք, Տպ. «Դրօշակ», 1988, 173 էջ:

Ընդհանուր ժողովին նախորդած ամիսներին ՀՅԴ Արևելյան Բյուրոյի նիստերի արձանագրությունները, շրջաբերականները, կոչերը, կուսակցական կառույցների գործունեությունն արտացոլող նյութերը, անվանի գործիչների նամակները, ՀՅԴ Գերագույն Դատական ատյանի նիստերի արձանագրությունները, որոնց առանձին պատառիկները թեև վկայաբերվել են վերջին շրջանում Հայաստանի առաջին Հանրապետության պատմությամբ զբաղվող որոշ ուսումնասիրողների աշխատություններում, բայց այդպես էլ ամբողջական գիտական հրատարակության չեն արժանացել:

Հրապարակման **առաջին մասն** ընդգրկում է Առաջին Հանրապետության շրջանում՝ մինչև 9-րդ Ընդհանուր ժողովը՝ 1919 թ. հունիս 16-օգոստոս 11 ժամանակահատվածում, ՀՅԴ Արևելյան Բյուրոյի գումարած 8 նիստերի արձանագրությունները:

Լայն և ընդգրկուն էր Արևելյան Բյուրոյի քննարկած հարցերի շրջանակը՝ ներքաղաքական, միջկուսակցական և համապետական. Ընդհանուր ժողովի գումարման, ՀՀ նոր կառավարության կազմավորման, Բյուրոյի պաշտոնաթերթի հրատարակման, Արևմտահայերի գործադիր մարմնի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, կուսակցական քարոզչության ակտիվացման, ՀՅԴ կառույցների վիճակի բարելավման, Միացյալ Հայաստանի տեսլականի հետապնդման հարցերից մինչև հայությանն անմիջականորեն վերաբերող արտաքին քաղաքական հիմնախնդիրները (Ղարաբաղի և Զանգեզուրի կարգավիճակ, Ադրբեջանի հակահայ քաղաքականությանը հակազդելու անհրաժեշտություն, Աստրախանի, Արեշի, Նուխու, Ղարաղաղի, Աշխաբաղի գաղթականության հայրենադարձում և այլն):

Ներկա հրապարակման մեջ տեղին համարեցինք ներկայացնել նաև ՀՅԴ Հայաստանի և Արևելյան Բյուրոյների ֆինանսական հաշիվների քննիչ հանձնախմբի արձանագրությունները: Վավերագրերը հրապարակվում են նույնությամբ՝ պահպանելով բնագրային ուղղագրությունը: Անհրաժեշտության դեպքում կատարվել են ուղղագրական և կետադրական շտկումներ, իսկ խմբագրական հավելումները տրված են ուղղաձիգ փակագծերում: Բոլոր փաստաթղթերը ժամանակի գործոնի պատճառով խունացած և խիստ դժվարընթեռնելի են, ուստի ՀՅԴ 1918-1920 թթ. գործունեության վավերագրերի ներկա հրապարակումը ուսումնասիրողների աշխատանքը դյուրացնելուց զատ, կարող է նաև վերջնական կորստից փրկել նրանցում առկա արժեքավոր տեղեկատվությունը:

Ավագ Ա. Հարությունյան  
*Պատմ. գիտ. թեկնածու*

## DOCUMENTS OF ARF (DASHNAKTSUTYUN) HISTORY IN 1918 – 1920

Part 1. Proceedings of ARF Eastern Bureau's sessions in June–August  
1919

Avag A. Harutyunyan

Թիվ 1  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱԿԵՐԱԿՐԵՐ

1919 թ. յունարի 18-ին, Թիֆլիս: Մենք՝ ներքև ստորագրող քննիչ յանձնաժողովի անդամներս, քննելով [ԸՅԳ] Հայաստանի Բիւրօյի<sup>21</sup> հաշիւները՝ 1917 թ. փետրուար 3-ից մինչև 1918 թ. յունիսի 1-ը, կազմեցինք այս արձանագրութիւնը հետևեալի մասին.

Յիշեալ ժամանակամիջոցում Հայաստանի Բիւրօն ունեցել է՝

Մուտք – 115.471 ռ. 76 կ.,

Ելք – 115.454 ռ. 10 կ.,

Մնացորդ – 17 ռ. 66 կ.:

Բացի յիշեալ մուտքից՝ Հայաստանի Բիւրօն յուլիսի 8-ին ստացել է Ամերիկայից<sup>22</sup> Վրացեանի<sup>23</sup> անուամբ 21.505 ռ. 40 կ., որպիսի գումար յանձնուած է ընկ. Ռուբէն Տէր-Մինասեանին<sup>24</sup> պահ: Ուրեմն, մնացորդը պէտք է հաշուել ամբողջովին 21.523 ռ. 16 կ., որից 17 ռ. 76 կ. յանձնուած է Արևելեան Բիւրօյին:

Հաշիւները տարած են կանոնաւոր, ունեն անհրաժեշտ գրքերը, մուտքերի և ելքերի համար կան համապատասխան փաստաթղթերը:

Ջանազան անձանց և հիմնարկութիւնների բաց է թողնուած աւանսգիր: Հաշիւներից պարզւեց, որ ներքոյգրեալ անձանց մօտ աւելացել են հետևեալ գումարները, որոնք պէտք է գանձեն:

Արշակ Ղազարեանի<sup>25</sup> մօտ – 1.861 ռ.,

Կարօ Սասունի<sup>26</sup> և Մշի Կ.Կ.ի մօտ – 1.848 ռ.,

Վարոս Բաբայեանի<sup>27</sup> մօտ – ...,

Գ (Գ) քաարի, թիվ 4 (40) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012

21 ԸՅԳ ութերորդ Ընդհանուր ժողովում, ըստ Ս. Վրացյանի, ընտրվել էր Հայաստանի Բյուրոյի հետևյալ կազմը. Ռոստոմ, Ակնունի, Վռամյան, Արամ, Արմեն Գարո, Ջարդարյան, Վանա Սարգիս (Բարսեղյան), Ռուբեն, Վրացյան, Մ. Վարանդյան: Իսկ ըստ ցարական Օխրանայի գաղտնի հաղորդագրությունների՝ Վարանդյան, Վռամյան, Շահրիկյան, Ռ. Ջարդարյան, Ակնունի, Արամ, Արմեն Գարո, Բոնասպարտյան, Արծիվյան, Գ. Խաժակ: Տե՛ս **Տասնապետեան Հրաչ, Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը**, էջ 97:

22 Նկատի ունի ԸՅԳ Ամերիկայի կենտրոնական կոմիտեն:

23 **Վրացյան Սիմոն** (1882, գ. Մեծ Սալա, Նոր Նախիջևան–21.05.1969, Բեյրութ) – անվանի քաղաքական-պետական գործիչ, հրապարակախոս: ԸԸ վերջին վարչապետը, Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահը: Հուշերի և բազմաթիվ գրքերի հեղինակ:

24 **Ռուբեն (Մ. Տէր-Մինասյան** – 1882–1951) – ազգային-ազատագրական պայքարի անվանի գործիչ: Ակտիվորեն մասնակցել է հայդուկային շարժմանը: Ընտրվել է ԸԸ Խորհրդարանի անդամ, եղել ԸԸ ռազմական նախարար: Արժեքավոր հուշերի հեղինակ:

25 **Արշակ Պողոսի Ղազարյանը** ծնվել է Բորչալուի գավառի Շուլավեր գյուղում: Եղել է ԸՅԳ գործիչ: 1907–1908 թթ. Թիֆլիսում խմբագրել–հրատարակել է «Ժայռ» հասարակական-քաղաքական, տնտեսական օրաթերթը, 1917–18 թթ. Ալեքսանդրապոլում նույնանուն թերթը, 1917–1919 թթ. Երևանում Ս. Վրացյանի հետ խմբագրել է «Ջանգ» քաղաքական, հասարակական և գրական եռօրյա թերթը: Սակայն 1921 թ. հետո Պարսկաստանում ծավալել է խորհրդամետ գործունեություն, հրատարակել մի քանի գրքույկ, Թեհրանում 1926 թ. խմբագրել է «Նոր գաղափար» հակադաշնակցական ուղղվածության թերթը:

26 **Սասունի Կարո** (1889–1977) – ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ: Ընտրվել է ԸԸ Խորհրդարանի անդամ, եղել Ալեքսանդրապոլի նահանգապետ: Արժեքավոր հուշերի և գրքերի հեղինակ:

27 **Վարոս Բաբայան** – ԸՅԳ նշանավոր գործիչ: 1919 թ. Երևանում մասնակցել է ԸՅԳ 9-րդ Ընդհանուր ժողովին, ընտրվել ԸԸ Խորհրդարանի անդամ, եղել է Աշխատանքի և խնամատարության նախարարի օգնական: Խորհրդային կարգերի հաստատումից հետո ձերբակալվել է, ապա ազատվել Փետրվարյան ապստամբության շնորհիվ: Պարսկաստանում եղել է ԸՅԳ ղեկավար գործիչ: 1941 թ. Թեհրանում դավադրաբար ձերբակալվել է խորհրդային անվտանգության մարմինների կողմից: Հետագա ճակատագիրը մինչ այժմ անհայտ է:

ՎԻՄ համահայկական հանդես

բժ. Հ. Օհանջանեանի<sup>28</sup> մօտ – ... ռ.<sup>29</sup>,

Յ. Մխիթարեանի<sup>30</sup> մօտ – 200 ռ.:

Ընդհանուր գումար – 6.510 ռ. (վեց հազար հինգ հարիւր տասն ռուբլի):

Նախագահ՝ Ե. Տէր-Մինասեան<sup>31</sup>

անդամներ՝

1. Ալ. Մարգարեան

2. Ա. Խան-Պապ...

ԸԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 134, թ. 1: Ձեռագիր: Բնագիր:

## Թիվ 2

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1919 թ. յունարի 21-ին, մենք՝ ներքոյ ստորագրող քննիչ յանձնաժողովի անդամներս, քննելով [ՀՅԴ] Արևելեան Բիւրօյի<sup>32</sup> դրամական հաշիւները, կազմեցինք այս արձանագրութիւնը հետևեալի մասին.

Արևելեան Բիւրօ 1917թ. ապրիլի 1-ից մինչև 1918թ. յունիսի 15-ը ունեցել է մուտք 97.880 ռ. 59 կոպ., որ նախորդ բալանսի 4958 ռ. 01 կոպ. մնացորդի հետ ամբողջ մուտքը սնում է՝ 102.838 ռ. 60 կոպ., ելք՝ 90.612 ռ. 02 կոպ., մնացորդ առ 16-ն յունիսի՝ 12.226 ռ. 58 կոպ.:

Յանձնաժողովիս տրւած ֆին.[անսական] առանձին փաստաթղթեր, թէ որտեղից է մնացել նախընթաց 4958 ռ. 01 կ.:

Հաշիւները տարւած են կանոնաւոր, հաշուապահական ձևով, ունեն մաքուր և կանոնաւոր գրքեր, համապատասխան բաժիններով: Թէ մուտքերում և թէ ելքերում ունեն պատշաճաւոր փաստաթղթեր:

Հաշիւները փակւած են գլխաւոր գրքի գանազան բաժիններով: Սակայն, Բիւրօյից գանազան անձանց և հիմնարկութիւնների տւած գումարների հաշիւը փակւելիս բալանս ստանալու համար շարունակ Кредит-ում<sup>33</sup> գրւած է «կորուստ», և այդ ձևով փակւած են բոլոր հաշիւները: Յանձնաժողովը կարծում է, որ իւրաքանչիւր տւած աւանս պէտք է արդարանայ փաստաթղթերով, որոնք պէտք է ներկայացնին աւանս ստացողների կողմից: Եթէ կան մնացորդներ, այդ մնացորդներն ևս պէտք է վերադարձնեն: Այլապէս, աննպատակահարմար է, մինչև իսկ անընդունելի, տալ մէկին մի գումար

28 **Օհանջանյան Համազասպ** (1873, Ալսալքալաք–1947, Կահիրե) – անվանի կուսակցական և պետական գործիչ: 1908–1915 թթ. ձերբակալվել և դատապարտվել է ցարական իշխանությունների կողմից: 1920 թ. սկզբից եղել է ՀՀ արտաքին գործոց նախարարը, իսկ մայիս–նոյեմբեր ամիսներին՝ վարչապետը: 1920 թ. դեկտեմբերի 25-ին բանտարկվել է բոլշևիկների կողմից և ազատվել է միայն Փետրվարյան ապստամբության շնորհիվ: 1922 թ. հաստատվել է Կահիրեում, ուր 1928 թ. մայիսի 28-ին հիմնված «Համազգային կրթական–հրատարակչական ընկերության» հիմնադիր–նախագահն էր: Երկար տարիներ եղել է ՀՅԴ Արևելյան Բյուրոյի անդամ: 1919 թ. 9-րդ Ընդհանուր ժողովում ընտրվել ՀՅԴ Բյուրոյի անդամ, իսկ 1933 թ. 12-րդ Ընդհանուր ժողովից սկսած մինչև մահ՝ ՀՅԴ Բյուրոյի առանցքային դեմքն էր:

29 Վ. Բաբայանին և Հ. Օհանջանյանին տրված գումարի չափը բնագրում դժվար ընթեռնելի է: Դրանց երկուսի չափն ըստ ընդհանուր գումարի և 1-ին ու 2-րդ կետերում նշվածի տարբերության՝ կազմում է 3601 ռուբլի:

30 Անձը պարզել չհաջողվեց:

31 Հավանաբար **Եգոր Տեր-Մինասյանն** է: Հանձնաժողովի մյուս անդամների ով լինելը չպարզվեց: Նրանց ստորագրությունները ձեռագիր են:

32 ՀՅԴ ութերորդ Ընդհանուր ժողովում, ըստ Ս. Վրացյանի, ընտրվել էր Արևելյան Բյուրոյի հետևյալ կազմը. Խ. Կարճիկյան, Ավ. Սահակյան, Հ. Զավոյան, Ս. Արարատյան, Ա. Շահխաթունյան, Ա. Գյուլխանդանյան: Իսկ ըստ ցարական Օլխրանայի ստացած գաղտնի տեղեկությունների նրան անդամակցում էին՝ Ռոստոմ, Ա. Ջառայան, Շիրակունի (Մարտ. Հարությունյան), Ա. Գյուլխանդանյան, Ն. Աղբալյան: Տես **Տասնապետեան Հրաչ, Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը**, էջ 97:

33 Ռուսերեն՝ վարկ:



աւանսով, [մեկ անընթեռնելի բառ] համար և որևէ հաշիւ նրանից չը պահանջած կամ մնացորդը չստացած, եթէ միայն այդպիսին կայ, հաշիւները փակել՝ համարելով այդ գումարը «կորուստ»: Այս հանգամանքի վրայ յանձնաժողովը հրավիրում է Բիւրօյի ուշադրութիւնը, որպէսզի ուղղւի և կարգի դրուի գործառնութեան այդ կողմը:

Հաշիւների այս ժամանակաշրջանի համար ներկայացւած է մի բալանս, որի տւեալները համապատասխանում են գլխաւոր գրքի հաշիւներին:

Նախագահ՝ Ե. Տէր-Մինասեան  
անդամներ՝  
1. Ալ. Մարգարեան  
2. Ա. Խան-Պապ...

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 134, թ. 2: Ձեռագիր: Բնագիր<sup>34</sup>:

### Թիվ 3

#### Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ Ընդհ. [անուր] ժողովի ընկ. Նախագահին<sup>35</sup>

Ներփակ կը ներկայացնենք Թիֆլիսի՝ [1]918 յունվ. 1-15 յունիս [1]918 շրջանի Կ. Կ.ի և նոյն Կ. Կ.ի գուարտիայի<sup>36</sup> հաշուէտուեալները, որոնց մասին հիմնաւոր դիտողութիւններ ըրած է Արևելեան Բիւրօյի կողմէ կազմւած Հաշուէքննիչ Մարմինը (գրաւոր արձանագրութիւն նօ. 3, ներփակ<sup>37</sup>):

Նկատի ունենալով այդ Հաշուէքննիչ մարմնի դիտողութիւնները և մասնաւորաբար արձանագրութեան ա. մասի 11-րդ նկատողութիւնը<sup>38</sup>, ըստ որի միանգամայն անտէս առնելով կանոնաւոր հաշուապահութեան և հաշուէտութեան ամէնատարրական պահանջները, գործը տարւել է անփոյթ, անկանոն, անպատասխանատու և անբարեխիղճ կերպով՝ Հաշուէքննիչ Մարմինս կ'յայտնէ [մեկ անընթեռնելի բառ] և կ'առաջարկէ այդ ժամանակաշրջանի Թիֆլիսի Կ. Կ.ի պատասխանատու անձերը յանձնել Դատական քննող ժողովին:

Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհ. [անուր] ժողովի Հաշուէքննիչ Մարմնի անդամներ

Խ. ... [անընթեռնելի]  
Գ. Սպերցի<sup>39</sup>  
Վրացեան  
15 Հոկտ. [1]919  
Երևան

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 134, թ. 3: Ձեռագիր: Բնագիր<sup>40</sup>:

34 Երկու արձանագրություններն էլ գրված են նույն գույնի թանաքով և նույն ձեռագրով:

35 Ազգանունը նշված չէ:

36 Մարտական ջոկատ:

37 Գործում բացակայում է:

38 Նշյալ արձանագրությունը գործում բացակայում է:

39 Անձը պարզել չհաջողվեց:

40 Տեքստը և ստորագրությունները նույն գույնի թանաքով են, իսկ Վրացյանի ստորագրությունը՝ կապույտ գույնի մատիտով: Գրության ներքևում սև գույնի մատիտով կա նշում. «Դատական մարմին» անընթեռնելի ստորագրությամբ:

ՎԱԽԵՐԱԿԵՐ

Դ (Ժ) քաարի, թիվ 4 (40) հուլիսի 1919-ից հունվարի 1920-ը

ՎԻՄ համահայկական հանդես

## ՀՅՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Թիվ 4

[1919] Յունիս 16

Ներկայ էին Ա. Վլետիս] Սահակեան<sup>41</sup>, [Ալեքսանդր] Խատիսեան<sup>42</sup>, Իշխան [Հովսեփ Արղույթյան]<sup>43</sup>, Ռուբէն [Տեր-Մինայան], Արշալոյս [Աստվածատրյան]<sup>44</sup>, Հմայեակ [Մանուկյան]<sup>45</sup>, Սարգիս [Արարատյան]<sup>46</sup>, Գէորգ [Ղազարյան]<sup>47</sup>, Սիրական [Տիգրանյան]<sup>48</sup>, Դրօ [Դրաստամատ Կանայան]<sup>49</sup>, Վահան] Խորէնի<sup>50</sup>, Նիկոլ [Աղբայան]<sup>51</sup>, Աբրահամ

41 **Սահակյան Ավետիք Հովհաննեսի** (1863, Զալալօղլի (Ստեփանավան)-1933, Բեյրութ) – անվանի կուսակցական-պետական գործիչ: 1898 թ. Թիֆլիսում կայացած ՀՅՎ երկրորդ Ընդհանուր ժողովում ընտրվել է Արևելյան Բյուրոյի անդամ: 1910-1912 թթ. ձերբակալվել է լիժնյան գործով: Եղել է Անդրկովկասյան Սեյմի պարենավորման նախարար, ընտրվել Ազգային խորհրդի նախագահ, եղել է խնամատարության և աշխատանքի նախարար: Փետրվարյան ապստամբությունից հետո՝ 1921-1926 թթ. բնակվել է Թավրիզում, ապա Իրանի կառավարության կողմից հրավիրվել է Թեհրան՝ որպես գյուղատնտես-միջատաբան: 1928 թ. նույն պաշտոնով հրավիրվել է Բաղդադ, իսկ 1930 թ. հաստատվել Բեյրութում:

42 **Խատիսյան Ալեքսանդր** (1874-1945) – անվանի պետական-քաղաքական գործիչ: 1909-1917 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխ-Քաղաքների միության կովկասյան կոմիտեի նախագահ, 1915-1917 թթ. Հայոց Ազգային խորհրդի փոխնախագահ: Մասնակցել է 1918 թ. Տրապիզոնի և Բաթումի բանակցություններին: 1918 թ. նոյեմբերից եղել է ՀՀ արտգործնախարար, 1919 թ. օգոստոս-1920 թ. մայիս՝ ՀՀ վարչապետ: Կնքել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը, մասնակցել Լոզանի խորհրդածողովի աշխատանքներին:

43 **Արղույթյան Հովսեփ** (1863, Սանահին – 1925, Փարիզ) – ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ: Արղույթյան իշխանական տոհմից: Խանստորի արշավանքի մասնակից: Եղել է ՀՀ դեսպանը Պարսկաստանում:

44 **Աստվածատրյան Արշալոյս** (1883-1973) – կուսակցական-պետական գործիչ, պատմաբան: Սարդարապատի ճակատամարտի օրերին եղել է Արամի օգնականը, ապա՝ ՀՀ լուսավորության նախարար, Երևանի քաղաքապետ: Տարագրության շրջանում ապրել է Բելգրադում: Հուշերի և գրքերի հեղինակ:

45 **Մանուկյան Հմայակ** – ՀՅՎ գործիչ: Ծնվել է Վանում: Եղել է «Աշխատանք» թերթի խմբագիրը: Ընտրվել է ՀՀ Խորհրդարանի անդամ: Վանի ինքնապաշտպանության վերաբերյալ հուշերի հեղինակ:

46 **Արարատյան Սարգիս** – ՀՅՎ գործիչ: Մասնակցել է ՀՅՎ 9-րդ Ընդհանուր ժողովին, ընտրվել Բյուրոյի փոխանդամ: Եղել է պարենավորման և ելևտից, ապա՝ խնամատարության նախարար: Խորհրդայնացումից հետո ապրել է Ռուսիայում:

47 **Ղազարյան Գևորգ** – ՀՅՎ գործիչ: Ծնվել է Կարսում: Մասնակցել է Սարգիս Կուկուչյանի արշավախմբի կազմակերպմանը: 1919 թ. մասնակցել է ՀՅՎ 9-րդ Ընդհանուր ժողովին: Խորհրդայնացումից հետո հաստատվել է Ռուսիայում: Երկրորդ աշխարհամարտից հետո ձերբակալվել է խորհրդային անվտանգության մարմինների կողմից, աքսորվել Սիբիր, որտեղ էլ մահացել է:

48 **Տիգրանյան Սիրական Թադևոսի** (1875-1937) – պետական գործիչ, դիվանագետ, իրավաբան: Ծնվել է Ալեքսանդրապոլում: Ավարտել է Պետերբուրգի համալսարանը: Ընտրվել է 2-րդ Պետական դումայի պատգամավոր: Մասնակցել է ՀՅՎ 9-րդ Ընդհանուր ժողովին, եղել է ՀՀ արտաքին գործերի նախարար, Խորհրդարանի փոխնախագահ: Խորհրդայնացումից հետո զբաղվել է մանկավարժությամբ: Գնդակահարվել է:

49 **Դրօ – Դրաստամատ Կանայան** (1883-1956) – ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ: Կամավորական երկրորդ գնդի հրամանատար: Ղեկավարել է Բաշ-Ապարանի ճակատամարտը: Եղել է ՀՀ վերջին ռազմական նախարարը:

50 **Խորենի Վահան** (1884-1920) – ՀՅՎ հայտնի տեսաբան: Ծնվել է Սիսիանի շրջանի Բոնակոթ գյուղում: Ավարտել է Լայպցիգի համալսարանը: Մասնակցել է ՀՅՎ 9-րդ Ընդհանուր ժողովին, ընտրվել ՀՀ Խորհրդարանի անդամ, եղել Երևանի Կենտրոնական կոմիտեի «Հայաստանի աշխատավոր» պաշտոնաթերթի խմբագիր: Գործիսի բանտում Արշակ Շիրիյանի հետ միասին սպանվել է բոլշևիկների կողմից:

51 **Աղբայան Նիկոլ** (1873-1947) – անվանի հասարակական գործիչ, գրականագետ, խմբագիր: Ընտրվել է ՀՀ Խորհրդարանի անդամ, եղել լուսավորության նախարար: Բոլշևիկյան բանտից ազատվել է Փետրվարյան ապստամբության շնորհիվ: Եղել է Բեյրութի Նշան Փալանձյան ձեռարանի տնօրեն:

[Գյուլխանդանյան]<sup>52</sup>, Սիմոն [Վրացյան], Մանաս [Սարգիս Մանասյան]<sup>53</sup>, Սահակ [Թորոսյան]<sup>54</sup>:

Օրակարգ  
Ղարաբաղի հարցը,  
Ժողովրդական կուսակցության հետ հանդիպում,  
Բիրոսի անունով ստացած գրութիւններ:

Ղարաբաղում կատարած նոր անցքերի առիթով տեղի ունեցան խիստ վիճաբանութիւններ, որից յետոյ Բիրոսն որոշեց անմիջապէս Զանգեզուրը միացնել Հայաստանի Հանրապետության հետ – ինչպէս այդ մասին առաջուց որոշւած է եղել – բացի այդ՝ յանձնարարում է կառավարութեան այդ երկրամասի կառավարութեան ձևը շուտով որոշել և անմիջապէս անցնել գործադրութեան:

**Բանակցութիւն ժողովրդական կուսակցության հետ:** Թէ ընկ. Խատիսեանը և թէ Ռուբէնն ու Սարգիսը [Արարատյան] խօսել են ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների հետ՝ հրաւիրելով մասնակցելու պարլամենտի ընտրութեան: Այդ կուսակցութիւնը իր ժողովներում մշակել է 9 կէտերից բաղկացած մի պայմանագիր, որի ընդունելու դէպքում միայն՝ կարող կլինեն ընտրութիւններին և կառավարութեան մասնակցել: Այդ կէտերն են. 1. պարլամենտի ընտրութիւնը յետաձգել մինչև սեպ. 1-ը, 2. 12 տաճկահայ պատգամաւորների կազմը պիտի փոխել և [Պողոս] Նուպար-փաշային պիտի յայտնել ի գիտութիւն, 3. Երուպայում իջած երկու պատիրակութիւնը<sup>55</sup> պիտի միացնել Նուպարի նախագահութեամբ, 4. հին պարլամենտը հրաւիրել գործի մինչև նորի ընտրութիւնը, 5. խնամատարութեան նախարարը պիտի իր իրաւունքների սահմանում մնայ և պարենաւորման նախարարութեան գործերին չխառնուի, և այլն: Բիրոսն լսելով այս պահանջները, որոշում է փակել խնդիրը և անցնել նախարարութիւն<sup>56</sup> կազմելուն: Սարգիս Արարատեանը դէմ էր խնդրի այս կերպ փակելուն և ցանկալի էր համարում բաւարարել ժողովրդական կուսակցությանը, որպէսզի նրանք մասնակցէին ընտրութիւններին և առիթ չունենային ապագայում նորանոր ինտրիգներ գործելու:

Պարլամենտի նախագահը յայտնում է, որ [Ստեփան] Մամիկոնեանը<sup>57</sup> մի առանձին գրութեամբ խնդրում է Ղարաբաղի դէպքերի առիթով պարլամենտի նիստ հրաւիրել, բացի այդ իրաւաբանները գտնում են, որ ժողովրդական կուսակցությանն անդամները հրաժարուած չէին պարլամենտից ընդմիշտ: Բիրոսն գտնում է, որ չի կարելի յարգել Մամիկոնեանի խնդիրը:

52 **Գյուլխանդանյան Աբրահամ Իսահակի** (13.08.1875, Վաղարշապատ – 1.01.1946, Փարիզ) – ՀՅԴ նշանավոր գործիչ: 1905–1906 թթ. հայ-թաթարական կռիւների շրջանում պատասխանատու դեր է կատարել Բաքվում և Գանձակում: 1902–1908 թթ. եղել է Ոսկանապատի կենտրոնական կոմիտեի անդամ, 1908–ից շարունակաբար ընտրվել Արևելյան Բյուրոյի անդամ: 1910–1912 թթ. ձերբակալվել է լիժնիյան գործով: 1917 թ. ընտրվել է Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահ, 1919 թ.՝ Հայաստանի խորհրդարանի անդամ, եղել է ներքին գործերի և արդարադատության նախարար: Փարիզում դասակարգել է ՀՅԴ Դիվանի վավերագրերը, գրել հուշեր:

53 **Մանասյան Սարգիս** (՝-1920) – մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ: Դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, եղել է ՀՅԴ Արևելյան Բյուրոյի Ջինական մարմնի անդամ: Լիժնիյան գործով բանտարկվել է Ռոստովի բանտում, ապա դատաւարտվել տաժանակիր արքայի մինչև 1916 թ.: 1918 թ. մայիսին մասնակցել է Ղարաբաղի խաչի հերոսամարտին: 1920 թ. որպէս ՀՅԴ լիազոր մեկնել է Դիլիջան՝ բանակցելու բոլշևիկների հետ, սակայն ձերբակալվել է և ուղարկվել Բաքու, ապա արքայի Նարգեն կղզի, ուր գնդակահարվել է:

54 **Թորոսյան Սահակ Դավիթի** (1885, գ. Փարայի, Աշտարակ–1940, Երևան) – պետական գործիչ, մանկավարժ: ՀՅԴ անդամ (1907 թ.): Եղել է Երևանի քաղաքագլուխ, ընտրվել ՀՀ Խորհրդարանի անդամ, հանրային խնամատարության, ապա՝ պարենավորման նախարար: Խորհրդային տարիներին երեք անգամ կալանավորվել է, մահացել է Երևանի բանտում:

55 Նկատի ունի Հայաստանի Հանրապետության և Հայ Ազգային պատվիրակությունները:

56 Նկատի ունի կառավարությունը:

57 **Մամիկոնյան Ստեփան** (1859, Ախալցխա–1921) – հրապարակախոս, իրավաբան, հասարակական գործիչ:

Ստացած գրություններ: Մոսկվայից մեր ընկերներ բժ. Զարինը<sup>58</sup>, Արտաշես Չիլինգարեանը<sup>59</sup> և Լիպարիտը [Նազարյան]<sup>60</sup> մի առանձին գրությամբ դարձեալ խնդրում են, որ կուսակցութիւնը միջոցներ ձեռք առնի իրենց ազատելու և երկիր բերել տալու համար: Բացի այդ, խնդրում են, որ Աստրախան, Ցարիցին և այլ վայրերում գտնուած մեր 30.000 հայ գաղթականութեան մասին մտածեն և ազատեն անտանելի դրութիւնից: Բոլշևիկ կառավարութիւնը համաձայն է մերոնց թոյլ տալ, որ Աստրախանի վրայով անցնեն Բագու: Բիրոսոն որոշեց նախկին ճանապարհով պահանջել Լենինից մեր ընկերներին ազատել, թոյլ տալ, որ դուրս գան բոլշևիկեան շրջանից:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 144, թթ. 1-1հակ.: Ձեռագիր: Բնագիր:

### Թիվ 5

[1919] Յունիս 17

Ներկայ էին. [Աբրահամ] Գիլխանդանեան, Հայր Աբրահամ [Ավետիս Սահակյան], Ռուբէն [Տեր-Մինասյան], Սարգիս [Արարատյան], Նիկոլ [Աղբալյան], Արշալոյս [Աստվածատրյան], Գէորգ [Ղազարյան], [Հնայակ] Մանուկեան, [Վահագն] Քրմոյեան<sup>61</sup>, Ա.լրմեն] Սատունի:

Օրակարգ

Արևմտահայերի գործադիր մարմնի<sup>62</sup> հարցը:

Արևմտահայերի գործադիր մարմնի, որ ութ հոգուց է բաղկացած, չորս անդամներից վերջնագրի ձևով միւս անդամներն ստացել են մի գրութիւն, որով պահանջում են բոլոր գործերը յանձնել գործադիր մարմնի դիւանին և թոյլ տալ, որ դիւանը միայն գործի: Դրանքեանը, Բուլղարացի Գրիգորը<sup>63</sup>, Տէրոյեանը<sup>64</sup> և Սէնցի Սմբատը այդ գրութեան մէջ յայտնում են, որ եթէ մինչև յունիսի 17-ը իրենց պահանջը չկատարի, իրենք կ'որոշուին Գործադիր մարմնից: Մտքերի փոխանակութիւնից պարզում է, որ արևմտահայ մասսաները դժգոհ են այս կառավարութիւնից և չեն կարող հաշտուել այն մտքի հետ, թէ այս կառավարութիւնը միացեալ Հայաստանի կառավարութիւն է: Նրանք տեսնում են, որ այս կառավարութիւնը հաւասար աչքով չի նայում ռուսահայ և տաճկահայ գաղթականութեան վրայ, արևմտահայ պաշտօնէութիւնը, որ երկար ժամանակ ծառայել

---

58 **Զավրյան Հակոբ** (1866–1920) – անվանի քաղաքական գործիչ: Ավարտել է Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան: Անմիջական մասնակցություն է ունեցել Հայկական հարցի լուծման դիվանագիտական գործընթացին: 1918 թ. Մոսկվայում ձերբակալվել է չեկոստների կողմից, մահացել է բանտի հիվանդանոցում:

59 **Դարբինյան Ռուբեն (Արտաշես Չիլինգարյան)** (1883–1968) – ՀՅԴ անվանի գործիչ, խմբագիր: 1909 թ. գործել է Կ. Պոլսում, 1914–1920 թթ.՝ Թիֆլիսում և Բաքվում, 1920 թ. եղել ՀՀ Արդարադատության նախարարը: Բոստոնում 1922 թ. հիմնել ու մինչև մահը խմբագրել է «Հայրենիք» ամսագիրը:

60 **Նազարյան Լիպարիտ** (1868, Զալալոլլի(Ստեփանավան)–1947, Կահիրե) – կուսակցական գործիչ, իրավաբան, հրապարակախոս: Ռ. Լեոնյան կեղծանունով հանդես է եկել մամուլում:

61 **Քրմոյան Վահագն** – դաշնակցական գործիչ: 1916 թ. գործել է Տարոնում: 1918 թ. մասնակցել է Աշտարակի ապստամբ թաթարների ճնշմանը:

62 Ի դեպ, Արևմտահայ Գործադիր Մարմինը ՀՀ նկատմամբ ունեցած ոչ բարյացակամ դիրքորոշմամբ հանդերձ, կազմակերպվել էր՝ իրեն տալով մի տեսակ պետական բնույթ: Նախագահի և անդամների ժողովները նույնիսկ հավասարեցրել էին ՀՀ կառավարության վարչապետի և նախարարների դրույթաչափերին՝ դրամն, իհարկե, չզլանալով ստանալ պետական բյուջեից: Տես Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 275:

63 **Բուլղարացի Գրիգոր (Կյոզեյան)** – ազգային-ազատագրական պայքարի գործիչ: Ծնվել է Կարինում: Զբաղվել է զինագործությամբ: 1915 թ. Վանի ինքնապաշտպանության ակտիվ մասնակից: Կյանքի վերջում գործել է Կ. Պոլսում: Մահացել է 1922 թ.:

64 **Տերոյան Վարագդատ Մկրտիչի** (1887–1938) – փիլիսոփա, թարգմանիչ, բառարանագիր: Ծնվել է Վանում: Վազգեն Տերոյանի կրտսեր եղբայրը: Ավարտել է Փարիզի Սորբոնի համալսարանը: Վանի ինքնապաշտպանության մասնակից: Եղել է Արևմտահայ Գործադիր մարմնի նախագահ: Հետո ծառայել է Ամերկում: Խորհրդային իշխանության կողմից ձերբակալվել է չորս անգամ: Մահացել է սիբիրյան արքունում:

է, բայց այսօր ժոճիկ չի ստացել, չի օգտուել լիկվիտացիայի օրէնքից՝ ինչպէս այդ եղել է ռուսահայերի վերաբերմամբ. խնամատարութեան մինիստրութիւնը մեծ քանակութեամբ արևմտահայերի դուրս արեց գործից և այդպիսով վիրաւորեց նրանց: Կառավարութեան մէջ մինչև այժմ ոչ մի մասնակցութիւն չունի արևմտահայը, Երկրի Կ. Կ.ն անգործունէութեան է դատապարտուել, չնայած արևմտահայ մասսաները նրան են ճանաչում, նրան են դիմում, Հայաստանի միացման ակտի առիթով ոչ մի տեղեկութիւն, ոչ մի բացատրութիւն չտրուեց նրանց, այնպէս որ նրանք յուսահատած չեն ճանաչում կառավարութիւնը իբրև միացեալ Հայաստանի կառավարութիւն և նոյնիսկ չեն ուզում մասնակցել պարլամէնտի ընտրութիւններին, նրանց աչքերը բնականօրէն դառնում է դէպի Նուպար փաշաները: Այս դրութիւնից դուրս գալու համար պէտք է. 1. Պարլամէնտի ընտրութիւնները յետաձգել, որով թէ արևմտահայը և թէ ժողով.[րդական] կուսակ.[ցութիւնը] և ռամկավարները կնասնակցէին և մեր հակառակորդները չեն կարող հսկողութիւն ունենալ, 2. Բիւրօն պիտի փոխի իր քաղաքականութիւնը դէպի արևմտահայերը և սկսի գործնական քայլերի, օր.[ինակ] որոշ գումար յատկացնի արևմտահայ զինուորականների լիկվիտացիայի համար, 3. Ընտրական գումարից որոշ գումար պիտի տրի Երկրի Կ. Կ.ի տրամադրութեան տակ շրջաններ մարդ ուղարկելու պրօպագանտի համար, 4. Պարլամէնտի ֆրակցիան պիտի վարի արևմտահայերի գործերը, հետևաբար 4-ի գրութեան համաձայն գործերը պիտի դիւանն ընդունի և գործի ֆրակցիայի հետ, 5. Կառավարութիւնը պիտի շտապի նախարարութիւնների մէջ տեղ տալ արևմտահայերին, 6. Մարդիկ ուղարկել Թիֆլիս, Բայթում, Պօլիս պրօպագանտի, Մայիսի 28-ի ակտի բացատրութեան համար, 7. Պարիզի համագումարին<sup>65</sup> նոր մարդիկ ուղարկել, քանի որ Կովկասի արևմտահայերի ներկայացուցիչները յետ են կանգնել և համագումարի նոր նստաշրջանի մասին խօսք կայ, 8. Առանձին սուրհանդակ ուղարկել Պարիզ, որպէսզի բացատրութիւն տայ և աշխատի, որ այնտեղ մի պատգամաւորութիւն լինի Հայաստանի միացեալ հանրապետութեան կողմից, 9. Կառավարութիւնը մի առանձին գրութեամբ պիտի բացատրի, թէ ինչպէս է հասկանում Հայաստանի միացումը: Այս առաջարկներից անցնում են հետևեալները. 1. Մի որոշ գումար դնել Երկրի Կ. Կ.ի տրամադրութեան տակ թէ բերանացի և թէ գրաւոր պրօպագանտ մղելու համար, 2. Թիֆլիս, Բայթում, Պօլիս յատուկ մարդիկ ուղարկել, 3. Կառավարութեան մէջ արևմտահայերին տեղ տալը շտապեցնել. երեք օգնականներ պիտի լինէին՝ մէկը ներքին գործերի մինիստրութեան, մէկը՝ խնամատարութեան, իսկ միւսը՝ ինքը կառավարութիւնը թող որոշի, 4. Գործադիր մարմինը պիտի հեռագրի Պարիզ և յայտնի, որ իրենք պատրաստուում են Կովկասում գտնուած արևմտահայերից պատգամաւորներ ուղարկել, եթէ համագումարը նիստի հրաւիրի, 5. Կառավարութեան մէջ հենց վաղվանից լիկվիտացիայի համար որոշ ձեռնարկներ անել, որոշել թէ ինչ գումարով կարելի կլինի այդ բանը վերջացնել, 6. Կառավարութիւնը մի ակտով պիտի բացայայտի միացման ակտը, 7. Կառավարութիւնը մի յատուկ սուրհանդակով պիտի ուղարկի Պարիզ այս առիթով, 8. Վաղը խօսել Գործադիր մարմնի բոլոր անդամների հետ և ապա որոշումներ կատարել այդ գրութեան մասին:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 144, թթ. 1հակ.-2հակ.: Ձեռագիր: Բնագիր:

Թիվ 6  
[1919] Յունիս 25

Նախագահ Ա.[բրահամ] Գիլլիսանդանեան, ներկայ էին՝ Հայր Աբրահամ [Ավետիս Ասահկյան], Արշակ [Ջամալյան]<sup>66</sup>, Նիկօլ [Աղբալյան], Սարգիս [Արարատյան], Ռուբէն

65 Նկատի ունի Փարիզում գումարված Հայ ազգային համագումարը:  
66 **Ջամալյան (Իսահակյան) Արշակ** (1882–1940) – ՀՅԴ անվանի գործիչ: 1905 թ. ձերբակալվել է ցարական ոստիկանապետի ահաբեկման համար: 1906 թ. Գերմանիայում հիմնել է «Եվրոպայի հայ ուսանողական միությունը»: Եղել է ՀՀ դեսպանը Վրաստանում, 1920 թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանի հետ կնքել է համաձայնագիր, մասնակցել է 1921 թ. բոլշևիկների հետ Ռիգայի բանակցություններին: Հետագայում եղել է ՀՅԴ ներկայացուցիչը Սոցիալիստական ինտերնացիոնալում:

ՎԱԿԵՐԻՍԵՐ  
Դ (Ժ) ԳՄԻՆԻՍԵՐ-ՂԵԿԵՐԵՐ, 2012  
Դ (Ժ) ԳՄԻՆԻՍԵՐ, ԹԻՎ 4 (40) ԽՈՒԿՆԵՐԵՐ-ՂԵԿԵՐԵՐ  
ՎԻՄ համահայկական հանդես

[Տեր-Մինայան], Գեորգ [Ղազարյան], Արշալոյս [Աստվածատրյան], Դրո [Դրաստանատ Կանայան]:

Օրակարգ

Տ. Բէկզատեանի<sup>67</sup> զեկոյցը,

Արևմտահայ գործադիր Մարմինը,

Թիֆլիսի և Երևանի Կ. Կ.ների դրամական պահանջները:

**Բէկզատեանի զեկոյցը:** Դենիկիին<sup>68</sup> գալու լուրը առիթ եղաւ Ատրբէջանի վայրագութիւնները վերսկսելու, ամէն մի հայ, որ զինուորութեան հասակում էր՝ բռնում, ծեծում, քանտ տանում և երբեմն անյետացնում: Ամսիս 11-ին խուզարկեցին մեր միսիայի պահեստը և Առաջնորդարանի պահեստներն ու եկեղեցին: «Ատրբէջան» թերթում զրգռիչ յօդած [են] տպում, թէ գնդացիներ և զինամթերք է գտնել: Այնինչ, բացի երկու հեռախօսից և հեռագրից, ոչինչ չկար: Վարչապետը թէև իմ դիմումներին պատասխանում էր, թէ անմիջապէս կդադարեցնի իմ<sup>69</sup> խուզարկութիւնը, բայց իրօք ոչինչ չէր անում, իմ բողոքը տպեցին Россия և Haime vpeom [թերթերը], իսկ «Ատրբէջանը» չտպեց: Հայկական ֆրակցիան նոյնպէս մի ազդու ճառով բողոքում է պարլամէնտում, բայց դրական շատ քիչ օգուտ ունեցաւ: Թուրքերը տարել էին Բիչերախովի<sup>70</sup> արխիվը, որ գտել էին եկեղեցու պահեստներում:

Արեշի և Նուխու, նոյնպէս և Շամախու, Գեղզգայի գաղթականութիւնը օր առաջ պիտի տեղափոխել Հայաստան, դրանց դրութիւնը շատ վատ է, գնալով աւելի ևս պիտի վատանայ: Գուցէ յետագայում թուրքերը չհամաձայնեն բաց թողնել, որոշ գիւղեր բառիս բուն նշանակութեամբ ճորտացած դրութեան մէջ են ընկել: Ատրբէջանի ինամատարութեան մինիստր Կլինովսկին վատ է վերաբերվում դէպի հայերը, ոչ մի բան չի անում հայ գիւղացուն ազատելու բռնաբարումից, սպանելուց, անպատելուց, աղջիկներին բռնաբարում ու յետոյ պոռնկատուն է գցում, և այլն, և այլն: Բագում թուրք ամբոյխի տրամադրութիւնը կոտորածային է. բացառիկ ամէն օր պիտի կոտորեն հայերին:

Տիկինսկին<sup>71</sup> այստեղից սիստեմատիկ կերպով հեռագրում և զրգռում էլ այնտեղի թուրք շրջանակները, այստեղ իբր թէ հայերը մեծ բռնութիւններ են գործ դնում թուրքերի վերաբերմամբ:

Խորէն Համասփիւրը ազգային խորհրդում ճառ է ասել այն մտքով, թէ դարաբաղցոց յամառութիւնը պիտի ընկճել և թուրքերի հետ խաղաղ ապրելու մի հնարք, միջոց գտնել, այստեղից ենթադրում են, որ նա նոյն բանը ասած կլինի և թուրքերի մինիստրներին:

Ախաբաղի հայերի դրութիւնը վատ է, բոլոր հայերին զինտրակոչի են կանչել. ես դիմեցի և պահանջեցի, որ հայերին ազատեն զինտրագրութիւնից: Այնինչ, այժմ ցորէն գնելը հնարաւոր չէ:

Ատրբէջանի քաղաքականութիւնն է. ոչ մի բան չտալ Հայաստանին և այդ յայտնի է գէն. [երալ] Բրագին<sup>72</sup>: Հազար ու մի նեղութիւնով հուլիս [ամսին] կարելի եղաւ միմիայն 10 վագոն նաւթ ստանալ և ուղարկել: Նրանք դիտմամբ ձգձգում են և չեն ուզում առևտրական պայմանագիրը ստորագրել: Վերջ զեկուցում:

**Թարիզից եկած մեր ընկերը** հարց էր դրել, որ Ղարատաղի հայութիւնը գաղթեցնէին. Սալմաստի գաղթականութիւնը փախել է Թաւրիզ, չի կարող գնալ իր տեղը, որովհետև պարսիկները ուզում են տիրանալ նրանց կալածքներին՝ ասելով, որ դա իրենց հասած վնասների վարձատրութիւնը պիտի լինի: Մենք կարգադրեցինք, որ մի ամ ժամանակ էլ կուլ տան՝ մինչև դրութիւնը կպարզվի:

**Արևմտահայերի Գործադիր Մարմինը:** Բիւրօյի կոչին Տէրոյեանը և Բուրաբաղին

67 **Բէկզատեանի Տիգրան** – պետական գործիչ: Եղել է ՀՀ դեսպան Թիֆլիսում և Բաքվում:

68 **Դենիկիին Աստուհ Իվանի** (1872–1947) – ռուս սպիտակգվարդիական անվանի գործիչ, զենեթրալ: 1919–1920 թթ. եղել է Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարը:

69 Նկատի ունի Բաքվում ՀՀ դեսպանատունը:

70 **Բիչերախով Լազար** (1882–1952) – ռուս զինվորական գործիչ: Եղել է Բաքվի զինված ուժերի հրամանատար՝ հակահայկական դիրքորոշմամբ:

71 **Խան Թեքիսկին** Երևանում Ատրբէջանի դեսպան էր և համակարգում էր ՀՀ դեմ տարվող խափանարար-դավադրական աշխատանքը:

72 Բաքվում անգլիական զինվորական ներկայացուցիչ:

արձագանք չտւին, չեկան ժողովի, բացի այդ Գործադիր Մարմինը մնացել է նոյն դատապարտելի վիճակում: Որոշում է, որ պրեզիդիումը<sup>73</sup> խօսի [Գրիգոր] Բուլղարացու հետ և ընկերներին թողատրի, որ 4ի հրաժարականը ընդունեն և այնուհետև լուծած համարեն այդ մարմինը՝ գործերը յանձնելով պարլամենտի արևմտահայ ֆրակցիային:

Ղարաբաղի խնդրի առիթով մեր գործադրած որոշումները մեզ մի փոքրիկ փոփոխություն է իջել: Գերասիմ Բալայանը<sup>74</sup>, [մեկ անընթեռնելի անուն], [Եղիշե] Իշխանեանը<sup>75</sup> գնում են Զանգեզուր, Թունեանը գնում է Զօտ, Իշխանը [Հովսեփ Արղության] գնում է իբրև զինուորական ներկայացուցիչ, տանում է իր հետ Դավիթ Անանունին<sup>76</sup>, Լևոն Թաղտաճեանին<sup>77</sup> էլ իբրև թարգման է տանում Իշխանը:

Երևանի Կ. Կ. էն իմանալով, որ մենք որոշել ենք Խորենուն ուղարկել Զանգեզուր մի առանձին գրությունը՝ խնդրում է այդ որոշումը փոխել և Խորենուն թողնել թերթը<sup>78</sup> տանելու, որովհետև ուրիշ յարմար մարդ չկայ: Որոշեց յանձնել պրեզիդիումին, որ մի մարդ գտնի թերթը տանող, Խորենուն փոխարինող:

Վրաստանի Կ. Կ. պրօպագանտի և այլ գործերի համար դրամական նպաստ է խնդրել կառավարութիւնից: Որոշեց պրօպագանտի, ներգաղթի և այլ գործերի համար կառավարութիւնից խնդրել, որ մօտ 1/2 միլիոն ռուբլի յատկացւի այս նպատակով և տրւի մի յատուկ ընկերոջ ի գործադրութեան:

Երևանի Կ. Կ. փոխարինաբար 5.000 ռուբլի է խնդրում իր ընթացիկ ծախքերի համար: Որոշեց յանձնել պրեզիդիումին իր հայեցողութեամբ կարգադրելու այդ հարցը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 144, թթ. 3-4: Ձեռագիր: Բնագիր:

Թիվ 7  
[1919] Յուլիս 4-ին

Նախագ. [առում էր]՝ Ա. [բրահամ] Գիլյանդանեան: Ներկայ էին՝ Հայր Աբրահամ [Ավետիս Սահակեան], Արշալոյս [Աստվածատրյան], Արսէն [Միքայելյան], Հնայեակ [Սանուկյան], Արշակ [Զամայան]:

- Օրակարգ
- Պօլսի նամակների ընթերցանություն,
- Վասպուրական[ցի] դաշնակ. [ցականների] գրությունը,
- Մայիս 28ի ակտի արձանագրութեան վաւերացումը,
- Համագասպին<sup>79</sup> պաշտօն տալու խնդիրը:

Պօլսի նամակները: Այս նամակներով Պօլսի ընկերները դնում են հետևեալ հարցերը: Պօլսում զինուորական դպրոց սաւարած սպաներ կան, որոնք ցանկանում են գալ Հայաստան ծառայելու, սակայն միջոցներ չկան դրանց բաւարարելու: Բիւրօն վաղուց արդէն գրել է Պօլսի ընկերներին, որ այդ սպաներին ուղարկեն այստեղ: Երևի դրամ չունենալու պատճառով մինչև հիմա մնացել են: Որոշում է գրել Պօլիս, որպէսզի

73 Ռուսերեն՝ նախագահություն: Նկատի ունի Բյուրոյի նախագահությունը:

74 **Բալայան Գերասիմ** (1879, Շուշի-1959, Փարիզ) – ՀՅԴ նշանավոր գործիչ: Բաքվի 1918 թ. հերոսամարտի ակտիվ մասնակից: Հետագայում եղել է Փարիզում գործող ՀՅԴ թանգարանի վարիչ:

75 **Իշխանյան Եղիշե** (1.01.1886, Շուշի-28.04.1975, Նյու Յորք) – ազգային-հասարակական անվանի գործիչ, ՀՅԴ անդամ: Եղել է Ղարաբաղի կառավարության առաջին նախագահ, արժեքավոր հուշերի հեղինակ:

76 **Անանուն Դավիթ (Տեր-Դանիելյան)** (1879-1943) – անվանի հասարակական գործիչ, պատմաբան: Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության (սպեցի-ֆիկների) ղեկավարներից էր: Մի շարք մնայուն աշխատությունների հեղինակ: Մահացել է խորհրդային արտոում:

77 Հետագայում՝ Կ. Պոլսում ՀՀ ներկայացուցիչ:

78 «Հայաստանի աշխատավոր»:

79 Խոսքը ՀՅԴ նշանավոր գործիչ, **Համագասպ Սրվանձոյանցի** մասին է, ում նկատմամբ որոշ վերապահ վերաբերմունք կար Բաքվի ինքնապաշտպանության անկումից հետո: Նա նշանակվել էր Նոր-Բայազետի գորախմբի հրամանատար:

մէկից պարտքով դրան առնեն մեր հաշին և դրանց ուղարկեն:

ԲՕՆԱԿԱՊՐՈՒՄԻՆԻ ԽԱՐՑԸ: Այդ նամակներից երևում է, որ Պօլսում այդ պարոնը շահագործում է Արևմտահայ Գործադիր Մարմնի անունը և հակառակ պրօպագանտ մղում Հայաստանի միութեան ակտի դէմ: Որոշում է, որ Երկրի Կ. Կ. մարդ ուղարկի Պօլիս պրօպագանտի [համար] և պաշտօնական հերքում գրեն:

Հայր Աբրահամը յայտարարում է, որ պարլամենտի արևմտահայերը մի ծրագիր են մշակել արևմտահայերի վերաբնակութեան [համար], որ որոշ լրացումներ անելուց յետոյ ներկայացրել է վարչապետին:

Վասպուրականցիների խնդիրը: 60-70 դաշնակց.[ական] վասպուրականցիներ մի առանձին գրութեամբ յայտնում են, որ [մայիսի] 28-ի ակտը ապօրինի է յայտարարած և «իրաւագրկում է դա ամէն ողջ արևմտահայութեան», ուստի պահանջում են, որ 12 արևմտահայ պատգամաւորները յետ կանչին և Երկրի Գործադիր Մարմինն էլ կղաղարի գործելուց ու հրախրի արևմտահայ համագումար: Բիւրօն որոշում է, որ Աբրահամն ու Արշակը հաւաքեն այդ վանեցիներին և բացատրեն իրենց սխալը:

Համազասպին արդէն պաշտօն տրւած է:

Ժողովի վերջում կարդացում է Մայիսի 28-ի ակտի արձանագրութիւնը և որոշ ուղղումներից յետոյ վաւերացում:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 144, թ. 5: Ձեռագիր: Բնագիր:

### Թիվ 8

[1919] Յուլիսի 23-ի խառն նիստը

Յուլիսի 23ին Արևելեան Բիւրօն կայացրեց Երկրի Կենտրոնական Կոմիտէի հետ միասին խառն նիստ Հայր Աբրահամի [Ավետիս Սահակյան] նախագահութեամբ: Ներկա էին՝ Աբրահամ [Գյուլխանդանյան], Սիմէօն [Վրացյան], Ար.[շակ] Ջամալեան, Ար.[շակ] Ղազարեան, Իշխան [Հովսէփ] Արղութեան, [Վահագն] Քրմոյեան, Արմէն Սասունի, Զաւէն, Վ.[հանս] Խորէնի:

Օրակարգ

Արևմտահայ Գործադիր Մարմինն ու դրա ապօրէն գործունէութիւնը:

Երկրի Կենտրոնական կոմիտէի կողմից զեկուցում է տալիս ընկ. Քրմոյեանը: Դեռևս յունիսի 16-ից մի խումբ թիրքահայեր դժգոհում են արևմտահայ համագումարից ընտրած Գործադիր Մարմնից և կառավարութեան՝ Հայաստանի միացեալ և անկախ յայտարարելու ակտից. շարունակ ժողովների գումարում, ինտրիգների լարում սրանրա դէմ և որոշ տրամադրութեան ստեղծում թէ ներկայ կառավարութեան որոշման, թէ Գործադիր Մարմնի և թէ Երկրի Կենտրոնական կոմիտէի անդամների դէմ: Վերջիններիս նկատմամբ պատճառաբանելով, որ նրանք մասսայից կտրւած անձնաւորութիւններ են, որ նրանք ինքնագլուխ գործեր են կատարում, յաճախ անպատասխանատու, հեղինակութիւն և կշիռ չունեն մասսաների աչքում, ուրեմն և պիտի հեռանան ասպարէզից և գործը յանձնեն մասսայի մէջ որոշ հեղինակութիւն ունեցող և օրինաւորապէս ընտրւած մարմին:

Յուլիսի 2-ին արդէն Հայաստանի վարչապետին ուղղած մի գրութեան մէջ Գործադիր Մարմնի չորս անդամները յայտնում են, որ իրենք կազմել են արդէն գործադիր դիւան, որը զբաղւելու է արևմտահայութեան վերաբերող բոլոր խնդիրներով, ուստի խնդրում են կառավարութեանը գործ ունենալ այսուհետ այդ դիւանի հետ:

Մի ուրիշ խմբակ, կրկին արևմտահայերից, որոնք իրանց համարում են դաշնակցականներ, կազմել են դաշնակցական վասպուրականցիների մի մարմին և խնդրում են Բիւրօից, որ այսուհետ գործ ունենան Երկրի Կենտրոնական Կոմիտէի փոխարեն՝ իրենց հետ:

Յիշեալ Գործադիր մարմնի չորս անդամները, ինչպէս ասում է զեկուցանողը, բոլորովին ապօրէն կերպով գրաւել են դիւանը և նրա գործերը ներկայումս բոլորովին ապօրինաբար վարում են տաճկահայութեան վերաբերող գործերը, չը զլանալով նոյնիսկ արտասահման և այլուրեք վարկաբեկել և պրովոկացիոն լուրեր-հաղորդագրութիւններ ուղարկելով մի կողմից, խանգարիչ դեր ստանձնելով այստեղ կառա-



վարական կարգադրությունների դէմ միւս կողմից: Վերջերս երկրի կարիքը ստիպեց մեր կառավարութեանը շուրջկալների միջոցով դասալիքներ հաւաքել 20-25 տարեկան զինուորացուների նկատմամբ: Բաւական էր այս կարգադրութիւնը, որ այսպէս կոչված Գործադիր մարմնի դիւանը սկսէր իր դաւադրական գործունէութիւնը – սկսեց զանազան տեսակի վկայականներ բաց թողնել տաճկահայերին, մտադուրեղով որքան կարելի է շատ թուով տաճկահայեր ազատել զինուորականչից և հնայիչ այդ ծրագրած նպատակին հասնելու համար չի թաշտում ոմանց հասակը 20-ից բարձրացնելու 28-ի և 30-ի, որպէսզի ազատեն զինուորականչից:

Ժողովը մանրամասնօրէն քննութեան առնելով դուրս խնդիրը՝ գտնում է, որ թիրքահայութեան մի մասի գործունէութեան այս կերպարանք ստանալու մէջ մեղաւոր են որոշ չափով և Երկրի Կենտրոնականի [կոմիտէի] անդամները, և Գործադիր մարմնի մնացած դաշնակցական ընկերները, և մեր կուսակցական ղեկավար շրջանները, որոնք ժամանակին կտրուկ միջոցներ ձեռք չառան իր բնում խեղդելու այս վնասակար ազիտացիան:

Բացի այդ, քանի որ Մայիսի 28ի ակտով արդէն յայտարարուած է միացեալ և անկախ Հայաստան, ուրեմն արդէն միացած են երկրի երկու հատածները, այլևս միտք չունի Գործադիր մարմնի գոյութիւնը և արդէն պիտի վերանայ հրապարակից. այս մտքով համապատասխան մարմինների կողմից յայտարարութիւն պիտի լինի մանուլում:

Ինչ վերաբերում է այն գրութեանը, որ ուղղուած է Արևելեան Բիւրօին, նրա տակ ստորագրուած են նաև այնպիսի անձնատրութիւններ, որոնք ակնյայտ հակադաշնակցականներ են. Արևելեան Բիւրօն սրա վերաբերմամբ յատուկ ստուգումն կատարելուց յետոյ պիտի անի իր պաշտօնական յայտարարութիւնը, իսկ ինչ վերաբերում է արևմտահայերի միւս դաշնակցական ընկերներին՝ Երկրի Կենտրոնականի անդամները բանակցութեան մէջ պիտի մտնեն և խնդիրը վերջացնեն փոխադարձ համաձայնութեամբ և համերաշխ կերպով: Երկար խօսակցութիւններից յետոյ նախագահն առաջարկում է հետևեալ բանձևերը.

Երկրի Գործադիր մարմնի դաշնակցական չորս ընկերները պիտի դիմեն կառավարութեան, որ Գործադիր մարմնի դիւանը ապօրէն կերպով է հրապարակ եկել, որ նախաձեռնում է հակապետական քայլեր, որ ուզուրպացիայի է ենթարկում ուրիշի իրաւունքները, և այլն, ուստի և պիտի վերցնել նրանից այդ իրաւունքները պետական միջոցներով: Այս բանաձևը ստանում է 3 ձայն:

Կառավարական միջոցի չը դիմել, այլ Գործադիր մարմնի դաշնակցական չորս անդամները մամուլի միջոցով պիտի յայտարարեն ի գիտութիւն ամէնքի, որ այն օրւանից, երբ յայտարարուել է պաշտօնապէս միացեալ և անկախ Հայաստան, Գործադիր մարմինն ըստ էութեան համարում է անլուրջ և նոյնիսկ վնասակար, իսկ նրա մէջ գործող ակնյայտ հակադաշնակցականների նկատմամբ Բիւրօի կողմից պիտի լինի, որոշ ստուգում կատարելուց յետոյ: Այս բանաձևը շահում է ձայների մեծամասնութիւնը և անցնում:

Առաջարկ է լինում նաև, որ Գործադիր մարմինը որպէս ապօրէն ձեռք ընտրուած մարմին, յայտնել կառավարութեան, որ ակտի յայտարարելու օրւանից մինչև այժմ նրայ միջոցով գործադրուած դրամական հաշիւները ստուգւեն, պահանջւեն ու գրաւուին մօտը գտնուած բոլոր դրամները:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 144, թթ. 6-6հալ.: Ձեռագիր: Բնագիր:

Թիվ 9

Բիւրօի [1919] օգոստոսի 8-ի նիստը

Օգոստոսի 8ին Արևելեան Բիւրօն գումարեց իր հերթական նիստը նախագահութեամբ ընկ. Արքահամի [Գյուլխանդանյան]: Ներկա էին՝ Աւ. [Ետիս] Սահակեան, Ս. [արգիս] Արարատեան, Ար. [շակ] Զամալեան, Գ. [տրգ] Ղազարեան, բժ. [Հովսէփի] Տեր-Դաւթեան<sup>80</sup>, Լ. [տն] Թադէոսեան<sup>81</sup>, Վ. [սահան] Խորէնի, Ար. [շակ] Ղազարեան և Հւ. [այակ]

80 **Տեր-Դավթյան Հովսէփ** (1870-1946) – ՀՅԴ անվանի գործիչ, եղել է Ռոստոմի մերձավոր ընկերը: Ծնվել է Թիֆլիսում: Մասնագիտությամբ՝ ակնաբույժ: Ընտրվել է ՀՅԴ Հայաստանի Բյուրոյի անդամ, ՀՀ Խորհրդարանի անդամ, ՀՅԴ Դատական ատյանի նախագահ:

81 **Թադևոսյան Լևոն** (Պապաշա) (1865-1936) – ծնվել է Ագուլիսում, Քրիստափոր Միքա-

ՎԼԻԿԵՆԻՍԻ  
Կ (40) Խոկմեմբեր-դեկտեմբեր, 2012  
Գ (Ժ) քաարի, թիվ 4  
ՎԼԽ համահայկական հանդես

Մանուկեան:

Օրակարգ

1. Կառավարական կազմի խնդիրը,

2. Ընթացիկ հարցեր:

Կառավարական կազմի խնդիրը: Կառավարական կազմի հարցը դեռ զբաղեցնում է Արևելեան Բիւրօին: Շատերի կարծիքով այս ծանր օրերում, երբ մեր երկիրը կանգնած է մեծ անակնկալների առաջ, երբ կանոնաւորւած չէ մեր ներքին կեանքը, երբ դեռևս պարզորոշւած չեն մեր երկրի սահմանները և դրսից ու ներսից վխտում են թշնամի տարրեր իրենց դաւադրական ծրագիրներով, կրկնում ենք այս ծանր օրերում՝ անհրաժեշտաբար կառավարական կազմի մէջ մտնեն մեր կուսակցութեան լաւագոյն ուժերը, Բիւրօի փորձւած անդամները՝ մի ուժեղ կառավարութիւն կազմելու համար: Վարչապետն արդէն ընտրուած է, նրան ազատութիւն պիտի տալ կաբինէտի մէջ հրաւիրելու Բիւրօի անդամներից նրանց, որոնք յարմար կը գտնուին կառավարչական բարձր պաշտօնների համար:

Այն օրւանից,– ասում է ժողովականներից մէկը,– երբ ընտրուեց վարչապետ, Բիւրօն պիտի շարունակի հետևողականօրէն իր աշխատանքը նաև նախարարներ ընտրելու գործում. Բիւրօն ամէն կերպ պիտի նպաստի, որ շատ շուտ յաջող կաբինէտ կազմվի:

Միւսներն էլ առաջարկում են, քանի որ կառավարութիւնը պատասխանատու է ֆրակցիայի առաջ, ըստ այդ ֆրակցիայի որոշմամբ՝ թող թեկնածուների ցանկը լինի դաշն. լակցական], այդ ցանկի մէջ կարող են լինել նաև Բիւրօի անդամներ, բայց հրաւիրողը ազատ պիտի լինի նաև հրաժարելու իրաւունքից: Պաշտպանում է նաև այս տեսակէտը, որ Բիւրօն որպէս կուսակցական բարձրագոյն օրգան, երբ իր միջից հրաւիրուի անդամներից մէկը կաբինէտի մէջ, Բիւրօն իւր կուսակցականացումը<sup>82</sup> տէսակէտից պիտի որոշի նրա կառավարութեան մէջ մտնելու և չը մտնելու խնդիրը:

Երկար թէր ու դէմ խօսակցութիւններից յետոյ առաջարկում է հետևեալ բանաձևը. – Բիւրօն պիտի նպաստի վարչապետին կաբինէտ կազմելու. այս բանաձևն անցնում է միաձայն:

Ընթացիկ խնդիրներ: Իգդիրից յատուկ մարդիկ են եկել որոշ պահանջներով զէնք ու ռազմամթերք հասցնելու համար իրենց շրջանը, քանի որ Աբազ Գէոլի շրջանում արդէն նկատելի են քրդական շարժումներ: Քանի որ պահանջները կառավարական բնաւորութիւն ունեն, որոշուեց աջակցել և դիմել կառավարութեան համապատասխան մարմիններին իջած պահանջներին բաւարարութիւն տալու համար:

Ալէքսանդրապոլի և Ղարսի շրջանում դրութիւնը խաղաղ չէ: Գաղթականները հրաժարում են ցուցակագրւելուց, որպէսզի պահպանուի հին սիստէմը, չստուգւած ցուցակներով հացի և պարէնի մատակարարումը, կառավարական տեղական վարչութիւնն անպայման ցանկանում է բոլորին ստուգել և ցուցակագրել որոշելու համար գաղթականութեան ճիշտ թիւը, այս հողի վրայ անչասելի [?] են էքսցէսներ և բարդութիւններ, բացի այդ շուտով այս շրջաններում տեղի են ունենալու կուսակցական շրջանային ժողովներ: Ժողովը որոշեց այդ երկու շրջաններն ուղարկել Բիւրօի անդամ Գէորգ Ղազարեանին և թիւրքահայերից Քրմոյեանին՝ յուզւած մտքերը խաղաղացնելու և ներկայ լինելու իբրև Բիւրօի ներկայացուցիչներ շրջանային ժողովում:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 144, թ. 7: Ձեռագիր: Բնագիր:

---

յեյանի քրոջ ավագ որդին էր: 1907 թ. Բաքվից ընտրվել է ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի պատգամավոր: 1909–1912 թթ. ձերբակալված էր Նովոչերկասկի բանտում: Ազատվելուց հետո մինչև 1918 թ. պատասխանատու կուսակցական աշխատանք է կատարել Բաքվում: 1919 թ. ընտրվել է Հայաստանի խորհրդարանի անդամ, ապա՝ ՀՅԴ Գերագոյն դատական ատյանի անդամ: Խորհրդայնացումից հետո մինչև մահը ապրել է Փարիզում:

82 Բնագրում փաստացի այսպես է:

Օգոստոսի 9ին Արևելեան Բիւրօն գումարեց իր նիստը Աբրահամի [Գյուլխանդանյան] նախագահութեամբ: Ներկայ էին՝ Հայր Աբրահամ [Ավետիս Սահակյան], [Սարգիս] Արարատեան, Ար. [Զակ] Զամալեան, Գ. [Լորգ] Ղազարեան, [Սարգիս] Սանասեան, բժ. [Հովսեփ] Տէր-Դաւթեան, Ար. [Զակ] Ղազարեան, Վ. [ահան] Խորենի և վարչապետ [Ալեքսանդր] Խատիսեանը:

Օրակարգ

Վարչապետի զեկույցը կառավարական կազմի մասին:

Վարչապետի զեկույցը<sup>83</sup>: Նախքան ֆրակցիայի առաջ թեկնածուների ցանկ յայտարարելը, ցանկալի համարեցի խորհրդակցություն ունենալ Բիւրօի անդամների հետ, մանաւանդ որ իմ հրահրած և ֆրակցիայի ընտրած թեկնածուները Բիւրօի կարող անդամներից են: Ինչպէս յայտնի է՝ երեկոյ ֆրակցիայի նիստը թեկնածուների նկատմամբ գաղտնի քիչարկութեամբ թերթիկներով թեկնածուների ցանկը տուա ինձ և որոշեց առանց արդիւնքը յայտնելու ընդհանրապէս ղեկավարւեմ այդ թերթիկների տրամադրութեամբ իմ կարիքնէտը կազմելիս: Ուրախութեամբ կարող եմ յայտնել, որ օրեր առաջ իմ կազմած ցանկը բոլորովին համապատասխանում է մեծամասնութեան տրամադրութեանը: Չայների բացարձակ մեծամասնութեամբ ընտրւած են՝ Ա. Գիւլխանդանեան, Ս. Արարատեան, Ա. Սահակեան, Նիկ. Աղբալեան և գէն. Արարատով<sup>84</sup>: Ռուբէնի մասնակցութիւնն<sup>85</sup> իմ կարծիքով կնպաստի որպէս օգնականի դեր և Սիլիկովի<sup>86</sup> նկատմամբ գտնւելով ֆրակցիայի տէսակէտի վրայ:

Բանավէճի նիւթ է դառնում կրկին այն խնդիրը, թէ ընկերները իրաւունք ունեն այս բոլորից յետոյ չը ստանձնելու նախարարական պաշտօններ: Բիւրօն ձայների մեծամասնութեամբ որոշում է – ընկերներից նրանք, որոնք ստանում են ֆրակցիայի անդամների մեծամասնութեան ձայները, հրաւիրում են վարչապետի կողմից և Բիւրօն հաւանութիւն է տալիս՝ պարտաւոր են մտնելու կառավարութեան մէջ:

Կարինէտի աշխատանքները,– ասում է Ալ. Խատիսեանը,– պիտի բաժանւի մօտաւորապէս հետևեալ ձևով – վարչապետ և արտաքին գործերի [նախարար] – Խատիսեան, ներքին գործերի – Ա. Գիւլխանդանեան, ֆինանսների և պարէնաւորման – Ս. Արարատեան, պետական գոյքերի, ներգաղթի և վերաշինութեան – Ա. Սահակեան, լուսաւորութեան և արդարադատութեան – Ն. Աղբալեան, Զինուորական – Արարատով:

Այս աշխատանքների մէջ ներքին համաձայնութեամբ կարող են փոփոխութեան ենթարկւել: Այս եզրակացութեամբ ես պիտի ներկայանամ ֆրակցիայի առաջ,– ասում է վարչապետը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 144, թ. 7հակ.: 2եռագիր: Բնագիր:

83 Տեղին է ներկայացնել Շ. Միսաքյանի՝ Ալ. Խատիսեանին տված բնութագիրը. «Ընկերների վերաբերմունքը դէպի նոր վարչապետը բարեացական չէ, կնկատուի գորաւոր բծախնդրութիւն անոր հանդէպ, երբեմն նոյնիսկ բացարձակ թշնամանք: Ընտրած ենք վարչապետ, բայց հանգիստ չենք ձգեր զայն: Չի վայելեր այն կատարեալ վստահութիւնը, որ Հայաստանի նման նոր պետութեան վարչապետը պէտք է վայելեր գեթ մեր կուսակցութեան կողմէ: Ալ. Խատիսեանի դժբախտութիւնը այն է, որ հին կուսակցական չէ և իր դիրքը կուսակցութեան մէջ տակավին խափուտ է, մինչդեռ նա թերևս միակ ներկայանալի անձն է մեր բոլոր նախարարների մէջ: Հայաստանի մէջ այժմ նեղ կուսակցական քաղաքականութիւն պէտք չէ վարել և մեր մանուկ պետութեան ղեկը պէտք է տրուի բոլոր կուսակցութիւններից կազմուած խառը կառավարութեան»: Տես **Դարբինեան Ռ.**, Փոթորիկի օրերուն, «Հայրենիք», Պոսթըն, 1948, N 9, էջ 41:

84 **Արարատյան Քրիստափոր** (1876–1937) – ռազմական գործիչ: Մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին: Եղել է ՀՀ ռազմական նախարար մինչև 1920 թ. ապրիլը: Խորհրդային բռնատիրոջան գոհ:

85 Բացարձակապէս հակառակ դիրքորոշում որդեգրած Ռուբենը (Տեր–Մինասյան) կտրականապէս պնդում էր հետևյալ միտքը. «Հայաստանը պէտք է կառավարե Հ. Յ. Դ. իր կոմիտեների կամ կոմիտէութիւնների միջոցով»: Տես **Դարբինեան Ռ.**, Փոթորիկի օրերուն, «Հայրենիք», Պոսթըն, 1948, N 11, էջ 48:

86 **Սիլիկյան Մովսէս** (1862–1937) – անվանի ռազմական գործիչ: Ղեկավար դեր է կատարել Սարդարապատի ճակատամարտում: Խորհրդային բռնատիրոջան գոհ:

Օգոստոսի 11ին Արևելեան Բիւրօս գումարեց իր նիստը Ս. Վրացեանի նախագահութեամբ: Ներկայ էին՝ Աբրահամ [Գյուլխանդանյան], Ս. [արգիս] Արարատեան, Ա. [ետիս] Սահակեան, Գ. [ւորգ] Ղազարեան, Ար. [շակ] Ջամալեան, Լ. [ւոն] Թաղէոսեան, քժ. [Հովսեփ] Տէր-Դաւթեան, Ար. [շակ] Ղազարեան, Վ. [ահան] Խորէնի:

Օրակարգ

Բիւրօի նախագահութիւնը,

Արևմտահայերի խնդիրը, Հմ. Մանուկեանի նամակը,

Կուսակցական օրգանի խնդիրը,

Կուսակցական Ընդհանուր ժողովը<sup>87</sup>:

Բիւրօի նախագահութիւնը: Բիւրօին մասնակցող անդամներից արդէն երեք հոգին հրաւիրած են կառավարութեան մէջ և նրանք ստանձնել են նախարարական պաշտօններ. դրանից երկուսը Բիւրօի նախագահութեան անդամներն են – Աբրահամ և Արարատեան: Արդէն զգացում է նոր նախագահութիւն ընտրելու: Ընտրում են նախկին Գէորգ Ղազարեանի հետ միասին 2՝ նոր անդամներ՝ քժ. Տէր-Դաւթեան և Վ. Խորէնի:

Արևմտահայերի խնդիրը: Շաբաթներ առաջ Վասպուրականի նորակազմ դաշնակցական մարմինը դժգոհ Երկրի Կենտրոնականից մի գրութիւն էր ուղղել Բիւրօին՝ յայտնելով իր դժգոհութիւնը Երկրի Կենտրոնականի դէմ, և միաժամանակ ի գիտութիւն յայտնելով իրենց ընտրութեան արդիւնքը: Այս խնդիրը հարթելու համար ընկ. Ջամալեանը խառն նիստ էր ունեցել նրանց հետ, որի մասին զեկուցում է Բիւրօին: – Երկրի կոմիտէն թուլացել, փաստօրէն կազմալուծած է, – ասում է Ջամալեանը, – մնացել են երկու հոգի: Նրանք մնացորդ են այն ժամանակից, երբ Երևանում հրապարակ եկաւ Հայաստանի Կենտրոնական կոմիտէ. տաճկահայերի համար էլ ստեղծեց Երկրի Կենտրոնական կոմիտէ: Կոնֆերանսը գումարեց և Հայաստանի Կենտրոնականը վերածեց Երևանի Կենտրոնական կոմիտէութեան, իսկ Երկիրը մնաց մինչև նրանց շրջանային ժողովի գումարումը: Երկրի Կենտրոնական կոմիտէն սկզբունքով ոչինչ դէմ չունի Վասպուրականի նորակազմ մարմնի դէմ, միայն առարկութիւններ կան այդ մարմնի մէջ մուտք գործած հակադաշնակցական երկու ընկերների դէմ – Դերոյեանի և Դրամբեանի, որոնց նկատմամբ և խնդիր էր բարձրացրել իր ժամանակին Բիւրօի առաջ: Այդ նորակազմ մարմինը կորոշի իր կուսակցական կազմակերպչական աշխատանքներն ունենալ: Յիշեալ խառն նիստը եկաւ այն եզրակացութեան, որ կազմակերպչական կանոնագրի տեսակէտից ոչ մի առարկութիւն չունի Վանայ կոմիտէի կազմութեան վերաբերմամբ:

բ. Վանայ կոմիտէն կարող է կատարել կանոնագրով իրեն վերապահած կազմակերպչական աշխատանքները: գ. Վանայ կոմիտէի անդամների վաւերացումը առժամակէն յետաձգում է, մինչև որ առաջարկած անդամների վիճակը ոմանց դէմ յարուցած առարկութիւնները Բիւրօի կողմից քննութեան առնին, դ. վերջնական վաւերացումի հետ միասին Վանի կոմիտէին կը տրի կոմիտէական կնիք:

Ս. Վրացեան: Անձնատրութիւնների նկատմամբ եղած առարկութիւններն այնքան ակներև են, որ առանց այլևայլութեան Բիւրօս պիտի յայտարարի նրանց Դաշնակցութիւնից դուրս: Սա խնդրի մի կողմն է միայն: Գալով Երկրի Կենտրոնականին – սա դեռևս գոյութիւն ունի և պիտի ձանաչի, թող որ նա թոյլ լինի իր գործունէութեամբ, կը գումարի շրջանային ժողով, կը վերակազմի և կը լրացի, մասնաւորապէս որ հրատարակում են սեփական օրգան: Բիւրօս յարաբերութեան մէջ է նրանց հետ, որոշ գումարներ է բաց թողել նրանց իրաւարակման համար, և այլ: Կազմել է Վանի կոմիտէ, նա պիտի դիմում անի Երկրի Կենտրոնականին և նրանից ստանայ իր հաստատումը, Բիւրօի հետ անմիջականօրէն կապ չպէտք է ունենայ. սա շատ թիրիմացութիւնների առիթ կարող է տալ: Եւ վերջապէս պիտի հասկանանք, որ այս բոլորն արւում է Ընդհանուր ժողովում մի ներկայացուցիչ ունենալու համար: Բիւրօի որոշմամբ այն օրականից, որ յայտարարել է միացեալ և անկախ Հայաստան, այլևս գոյութիւն չպիտի ունենայ Գործադիր մարմինը, մասնաւորապէս, որ նա բաւական տխուր դեր է կատարում ներկայ օրերում, վարում է հակակառավարական քաղաքականութիւն, ցանկանում է

87 Նկատի ունի ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը:

խանգարել կառավարչական կարգադրությունները, մանաւանդ զինուորակոչի վերաբերմամբ, պրովոկացիոն լուրեր հաղորդում արտասահման ընկերներին և մամուլին, և այլն: Եւ այս դերը ստանձնել են բռնի կերպով:

Ժողովն ընդհանուր առմամբ համաձայն է Զամալեանի մասնակցութեամբ խառն նիստի եզրակացությունների հետ միայն Երկրի կենտրոնականի մատնանշած երկու անկատման արտադրությունների նկատմամբ, որոնց դէմ առարկություններ կան որպէս ոչ դաշնակցականների՝ ժողովը որոշեց երեք հոգուց մի յանձնախումբ ընտրել, որոնք պիտի զբաղւին այդ խնդրի քննութեամբ և պարզեն առարկությունների ճշտությունը: Յանձնախմբի անդամներ ընտրուեցին՝ բժ. Տէր-Դաւթեանը, Վահ. Խորէնի և Հմ. Մանուկեան:

**Հմ. Մանուկեանի նամակը:** Հմ. Մանուկեանը օգոստոսի 11ի թակիր նամակով դիմելով Արևելեան Բիւրօին՝ գանգատում է կառավարութեան թիրքահայերի զօրակոչի նկատմամբ գործադրող միջոցների դէմ և խնդրում է միջոցներ ձեռք առնել դադարեցնելու թիրքահայերի նկատմամբ գործադրող զինուորակոչային գործողությունները և գործին տալ աւելի խելացի կազմակերպություն: Ժողովը գտնելով խնդիրը կառավարչական, որոշեց ըստ էութեան չը զբաղւել այս հարցով, այլ յայտնել կառավարութեան ի գիտություն:

**Կուսակցական օրգանի<sup>88</sup> խնդիր:** Ընտրած խմբագիր Ս. Վրացեանը գեկուցում է խմբագրական գործի կազմակերպման մասին: Հրատարակչական գործն ամբողջովին յանձն առաւ կարգադրել Ա. Օհանջանեանը: Գալով խմբագրական կազմին և աշխատակիցներին՝ խորհրդակցեցին մի քանի ընկերների հետ և խոստացան մասնակցել խմբագրական աշխատանքներին Վ. Նաւասարդեան և Ար. Յովհաննիսեան, կոլլեգիայի աշխատանքները կատարելով, բայց առայժմ չեն կոչւի կոլլեգիայի անդամներ, որոշ ժամանակ միասին աշխատանքից յետոյ միայն, երբ տեսնենք, որ գործը համերաշխ է գնում, այն դէպքում կառնենք այդ ֆունկցիան նաև մեզ վրայ, - ասում են նրանք: Բիւրօի առաջ պատասխանատու կլինի խմբագիր Վրացեանը: Խմբագրական աշխատակիցների ցանկում ի նկատի ունեն քարտուղարութեան և վրացական բաժնի համար Ար. Մեհրաբեանին<sup>89</sup>, որին և Բիւրօից խնդրում են ազատել նրան Բիւրօի քարտուղարութեան պաշտօնից, Բարսամեանին ի նկատի ունեն թուրքական բաժնի համար, խնդրանք սրբագրիչ, լրատու, թարգմանիչ, և այլն: Խօսք է եղել նաև հոնորարի մասին. ընկերական խորհրդակցությունը գտել է, որ հոնորարի չափը բաւարար պիտի լինի, որպէսզի թերթի [երկու անընթեռնելի բառ] կարող ուժերը<sup>90</sup>. խմբագրականների [մեկ անընթեռնելի բառ] համար 50ական կոպէկ, թղթակցությունները 30 կոպ. տողավարձով, իսկ բանաստեղծություններն ու գեղարւեստական գրածների տողավարձի որոշումը՝ խմբագրին:

Հեռագիրների և թղթակցությունների համար ունենալ կենտրոնական վայրերում յատուկ աշխատակիցներ: Ի նկատի ունենալ նաև մի բնակարան՝ յարմար խմբագրութեան:

**Ընդհանուր ժողով:** Ի նկատի ունենալով ներկայ ծանր դրությունը՝ հազիւ թէ կարելի լինի Ընդհանուր ժողովի<sup>91</sup> նախապատրաստական աշխատանքները կատարել, ուստի խնդիր բարձրացաւ որոշ ժամանակով յետաձգելու: Որոշեց հեռագիրներ ուղարկել մօտիկ շրջանները՝ գոնէ կովկասեան ռայոնում, որ պատգամաւորներն առայժմ չը ճանապարհուեն, բայց պատրաստ լինեն և սպասեն մեր կարգադրութեան: Իսկ եկողներին տեղատրելու համար յանձնարարել Արշ. Ղազարեանին խօսել այդ մասին Կենտրոնականի (Երևանի և) տեղական ընկերների հետ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 144, թթ. 8-8հակ.: 2եռագիր: Բնագիր:

88 Նկատի ունի ՀՅԴ Բյուրոյի «Յառաջ» պաշտոնաթերթը:  
89 Մեհրաբեան Արշակ Պետրոսի (1865, Շուպակեր, Բորչալուի գավառ-1921) - ՀՅԴ գործիչ: Արևելյան Բյուրոյի պաշտոնաթերթ «Յառաջ»-ի հաջորդական անվանափոխումներից մեկը դարձած «Խարխիս»-ի խմբագիր եղած ժամանակ դատապարտվել է լիժնյան գործով՝ դաշնակցական թերթ հրատարակելու և նրա էջերում կուսակցական բովանդակությամբ նյութեր տպագրելու համար:  
90 Բնագրում բառացի այսպես է, հավանաբար պետք է շարունակել՝ «կարողանան աշխատել»:  
91 Խոսքը 9-րդ Ընդհանուր ժողովի մասին է: